Мой муж родился 20 ноября 1951 года в Москве в творческой семье. Отец его Рубен Аракелович подростком защищал Севастополь, а в 18 лет был призван и воевал уже в регулярных войсках. Вернувшись израненным с войны, он поступил в театральное училище, а позже получил высшее техническое образование. Мама моего мужа была художником-модельером и замечательным акварелистом, преподавала в Московском технологическом институте композицию. У таких родителей не мог родиться заурядный ребёнок. К сожалению, родители разошлись и воспитанием мальчика занялась бабушка.

Христина Емельяновна была в ссылке, потому увезла внука с собой на Урал. А вернулись они в Москву уже после смерти вождя народа. Бабушка, честь ей и хвала, сумела воспитать в мальчике благородство и умение отстаивать свою точку зрения. Сказать, что Аркадий очень любил бабушку, – это ничего не сказать, он её боготворил: просыпаясь, здоровался, а уходя, прощался, обращаясь к её портрету.

Отец воспитал сына так, что для него слова «честь, совесть и достоинство» стали не просто фигурой речи. Мама Евгения Анатольевна дала сыну творческое начало. Они проводили вместе немало времени, и это не могло не сказаться на пристрастиях Аркадия. Он видел то, что другие не замечали, чувствовал так, как другие не могли. В новой семье мамы Аркадий приобрёл сестру и брата. Татьяна Стамова (творческий псевдоним Т. Васильевой) – тонкий поэт и прекрасный переводчик с английского и итальянского. А Дмитрий Гутин был потрясающим художником и поэтом, к сожалению, он очень рано ушёл из жизни, получив смертельную дозу облучения в Чернобыле (был ликвидатором): сильно болел и не дожил до сорока лет.


Татьяна вспоминает: «Мы с младшим братом боготворили Аркадия. Художественные способности передались Аркадию от мамы. В молодости он увлекался рисованием шаржей, и это у него отлично получалось.

Он был красавцем, душой компании, надёжным другом, никогда не проходил мимо несправедливости, любил Высоцкого и пел его под гитару так, что слушать можно было до бесконечности.

Потом Аркадий стал петь собственные песни, и это тоже было незабываемо.


В последние годы петь он не мог из-за болезни легких. О том, что пишет стихи, почти не говорил. Но они были его утешением.

**Вероломная усталость
Овладела естеством,
Лишь любовь одна осталась,
Словно птица за бортом!**



И песни Аркадия (записанные друзьями), и его стихи остаются с нами. И сам он не ушёл – живёт во всех, кто его знал и любил, и протягивает руку».

Аркадий очень любил и хорошо знал Москву. Разбуди его среди ночи, задай вопрос, и он обстоятельно объяснит, как лучше пройти и какие интересные места ты встретишь на своём пути. А ещё он любил Крым, куда его возили родители и бабушка. В 1966 году в городе Старый Крым Нина Грин (жена А. Грина) пожелала



Аркадию: «Аркаша, дружок! Желаю тебе доброго пути в жизнь. Люби природу и искусство – будешь счастлив». И он любил

202

природу и искусство – и был счастлив. Конечно, не обошлось без падений и разочарований, предательства и потерь, но это только закаляло душу и сердце Аркадия.

В девятом классе он «заболел» морем и после окончания учебного года уехал поступать в Таллин в мореходку – путешествия, романтика, песни под гитару, восторженные взгляды девушек. Была учёба, практика, возмужание, первые выступления и первые песни, ожидание солёных брызг и первое предательство... Не доучившись последнего курса, Аркадий возвращается в Москву. Он сумел пережить это падение, получил свой урок у жизни, но ещё очень долго не мог простить предательства недавних «друзей». Так родилась песня, где есть слова «не верь друзьям – кругом мираж». И все-таки настоящие друзья есть, их мало, но есть. Валерий Добрынин, капитан дальнего плавания, не пропустил ни одного дня рождения друга, звонил, чтобы поздравить, из дальних далей, из-за синих морей и океанов. Встречались они редко, но дружбу пронесли через года. Было ещё несколько друзей.

Аркадий мечтал о море, судьба распорядилась по-другому, однако морская тематика проходит красной нитью в его творчестве. А может, он вовсе не «морской волк», а просто неизвестный хороший поэт, прекрасный человек, любимый мужчина, сумевший сделать меня счастливой, ставший другом моей дочери, да он и считал Аришу своей дочкой, а её дочерей своими внучками.

У нас как-то произошёл смешной случай. Аркадий работал в ночную смену (служил в охране), а у меня сложилась бессонная ночь, потому появились стихи, которые он после положил на музыку, получил романс.

* * *

Посвящая мужу своему Аркадию

Как долго я ждала тебя,
Рвалась, искала, сомневалась,
Обманом мучила себя,
Жила мечтами, ошибалась.

Когда последние лучи,
Сгорая, выли словно звери,
Ты в руку положил ключи,
Мне жизни отворяя двери.

С тобой купаюсь в счастье я,
Его морями не измерить.
Люблю весь мир, в тебе себя.
Прошу тебя мне в этом верить.

К тебе приду при свете дня
Через пустыню в полдень жаркий,
По каплям подарю себя,
Дотла сгорю свечою яркой.

Я по лучам спущусь к тебе,
Сжигая всё своей любовью.
Я растворюсь в твоей судьбе,
Впитаюсь в плоть твою я солью.

Холодной полночью луной
По Млечному Пути скачусь я,
Согреюсь я твоей душой,
Уйду и снова возвращусь я.

И от одной звезды к другой
Через столетия и мгновенья,
Рассеяв свет холодный свой,
С тобой останусь без сомненья.

(20 августа 2005 г.)

Когда муж пришёл домой, я протянула ему листочек:

– Почитай.

– Почитай ты, – отвечает мне Аркадий, протягивая свой листок.

* * *

Долго не спится в холодную ночь.
Синяя птица спустилась помочь.
Трепетной лаской согрела мне кровь.
Это не сказка, но это любовь!

Ты пришла ко мне неожиданно, смехом звеня!
Жил уныло я и странно – хватит с меня!
Припаду устами к кубку счастья испить!
Коль в одну мы сели шлюпку, надобно плыть!

Всё кругом не всё как надо в сонме людском.
Но ничто нам не преграда, если вдвоём!
Так угодно было Богу встретиться вдруг
И пройти одну дорогу вместе, мой друг!

Можно пить водку, а можно не пить.
Коли сел в лодку, то надобно плыть.
Можно напиться и больше не пить,
Можно влюбиться, а можно любить!

Я не понимаю толком, где же мой дом?
Я в лесу бываю волком, в небе – орлом!
Не пристало драть мне глотку, в грудь себя бить!
Коли сел однажды в лодку – надобно плыть!

Я гребу отчаянно, смело – хочется жить!
Ты ждала меня, хотела нежно любить.
Долго бил меня злой ветер, но не добил.
Но а я на этом свете вновь полюбил!

Можно пить водку, а можно не пить.
Коли сел в лодку, то надобно плыть.
Можно напиться и больше не пить,
Можно влюбиться, а можно любить!
20 августа 2005 г.

Удивительно, но мы в одну ночь написали друг другу стихи. Свои он тоже положил на музыку, так и исполнял в связке.

Мой муж очень любил творчество С. Адамо и, не зная французского, пел его песни, а ещё он написал на музыку прославленного французского шансонье свои слова, и это было великолепно. А русский язык Аркадий знал безупречно, он мог дать консультацию по телефону друзьям и знакомым, если возникали проблемы у их детей в школе. Аркадий был всю жизнь восторженным человеком, не восхищался и не охал по пустякам, а мог

найти во всём что-то удивительное и с возрастом не научился радоваться и удивляться простым вещам. Он не был жадным: мог снять с себя последнюю рубашку и поделиться последним куском хлеба. Но и безалаберным тоже не был, ведь зарабатывал тяжело, особенно в последние годы, когда болезнь уже давала серьёзно о себе знать, но не хотел уходить на покой, считал, что мужчина должен содержать семью.

Аркадий был очень настойчивым человеком. Решил выучить армянский язык – значит, выучил. Всё время сетовал на то, что в юности был непрозорливым и не учил язык с бабушкой. А в зрелом возрасте понял, что хочет знать язык предков. Покупал словари и разговорники, учил буквы и звуки. Долго не мог найти самый лучший разговорник В. Бекчяна, нашёл самого Ваграма Владимировича и получил приз – нужную книгу. Очень страдал от того, что не получается, – язык сложный, но трудился не покладая рук. Успокоился, когда узнал, что У. Шекспир так и не освоил армянского языка. Родственников, говорящих на армянском, не осталось в живых, поэтому не было разговорной среды, а выйти на улицу и разговаривать с проходящими мимо армянами считал смешным. Я, конечно, запомнила некоторые выражения и слова, но со мной не поговоришь, не отточись знания, поэтому Аркадий стал просто слушать и петь армянские песни. Красивые песни да таким замечательным голосом! Это было прекрасно!

Отпевали Аркадия в церкви Введения Пресвятой Богородицы в Вешняках, было много народа: родственники, соседи, друзья и товарищи, однокурсники. Служители храма говорили:

– Наверное, это очень хороший человек, раз так много людей пришло с ним проститься.

Да, очень хороший.

Я зажигаю перед его портретом свечу. Внучка говорит:

– Надо зажечь дедушке Аркадию свет, чтобы он знал, где его дом.

Ладушка правильно говорит, она маленькая, она всё знает.

Похоронен Аркадий Рубенович Верапатвельян на армянском участке Ваганьковского кладбища. Это энергетически очень хорошее место: там становится легко и спокойно. Вроде бы большой город вокруг, а тихо, вроде бы за оградой суэта, а здесь шелестит листва и цветут ландыши.

И всё-таки мне повезло с мужчиной, только он ушёл. Я очень стараюсь научиться жить без Аркадия, воспринимать его на духовном уровне. Это трудно, но он мне так много дал в этой жизни, что я просто должна научиться.

31.05.2017 г.
г. Москва

Ларуса ЯНИЦКАЯ.


ИОСИФ ОРБЕЛИ. БАСНИ СРЕДНЕВЕКОВОЙ АРМЕНИИ САМЫЙ НЕВЕЖЕСТВЕННЫЙ ЧЕЛОВЕК

Некий царь пожелал построить башню, и сколько ни возводили ее днем, ночью она рушилась. И собрал царь своих мудрецов, и спросил причину сего. И они сказали: «Если хочешь, чтоб стены не рушились, найди ты одного невежду и замурай его в стене, и пусть кладут стену, больше башня не рухнет». И царь сказал: «Сделайте выбор сами и найдите невежду, которого живьем захоронят в стене».

И сели мудрецы вместе решать, где им найти невежду, и один сказал: «Невежественен рыбак, ибо имеет дело не с людьми, а с водой и рыбами». А некоторые сказали, что погонщик ослов невежда и есть, день-деньской он наедине с ослом и всю свою жизнь проводит с вычным животным, скитаясь с ним по горам и лесам. Одни рыбака предлагали, другие – пастуха, что зимой и летом бродит с овцами по горам, не спускаясь ни в село, ни в город. И одобрили это, и пожелали пастуха привести.

Тогда один из мудрецов царя промолвил: «У царя нашего есть пастух, который родился в горах среди овец и вырос там и за всю свою жизнь ни села не видел, ни города». И послали десять всадников, чтоб привели этого человека. И всадники нашли пастуха, который доил в это время овцу и, поприветствовав его, сказали: «Царь зовет тебя».

Пастух сказал: «Я в своей жизни ни разу ни в город не заходил, ни в село – зачем ему звать меня?» А они, слукавив, сказали: «Не знаем». А пастух устроил им угощение, ягненка зарезал, сыру принес, развеселил их и с мольбой стал просить, чтоб раскрыли, для чего зовут. И они сказали: «Вот по такой причине тебя зовут. Царские мудрецы сказали, что надо заму-



На фото Леван Учайнешвили в фильме Сергея Параджанова «Легенда о Сурамской крепости»

ровать в стене невежду, чтобы башня была прочной». Тогда пастух рассмеялся и сказал: «Невежды и глупцы и есть те мудрецы, что сделали такой выбор». И, принеся овцу, сказал: «Я вам покажу мое невежество». И сказал: «У этой овцы два ягненка в чреве, один – самец, другой – самка, головка у одного белая, у другого – черная». И зарезал овцу, и достал из чрева ягнят, и было так, как он сказал. И, принеся другую овцу, сказал: «У этой овцы один ягненок в чреве – самец, тельце у него черное, головка – белая».

И зарезали, увидели, что так. И пастух сказал: «В этих двух стадах, что перед вами, я знаю каждую овцу, какая родит, а какая – бесплодна, и какая самца родит, а какая – самку, и от какой черный будет ягненок, или белый, или пятнистый. Могут ваши мудрецы узнать это?» Всадники сказали: «Нет, никогда». Пастух сказал: «Так знайте, что не я тот глупец и невежда, которого вы ищете. А если пожелаете, я покажу вам невежду. Пусть царь схватит своего наиба и все, что есть у того, отнимет, а самого его повесит на площади и тяжким образом истязает, чтобы видели все горожане, потом пусть спрячут наиба и скажут, что убили его. И пусть три дня в городе возвещают, что какой человек придет и возьмет на себя обязанности наиба, все его имущество отдадут этому человеку и назначат его наибом царя. И если человек тот, видевший содеянное над наибом и слышавший, что сделали с ним, выйдет вперед и скажет, что он хочет стать наибом, тот человек и есть глупец и невежда, хватайте его и кладите живым в стену, чтобы не рушилась она больше и стала прочной».

Они пришли и рассказали царю, и царь сделал так, как сказал пастух, и пока в городе глашатаи возвещали, что кто придет и возьмет на себя обязанности наиба и примет его власть, получит его имущество и земли, подбежал один придурок и сказал, мол, я возьмусь за это дело. И его спросили: «Видел ты, что сделали с наибом?» Он сказал: «Да, видел». И тотчас схватили его, потащили и живым замуравали в стене, и сделалась стена прочной.

Вардан АЙГЕКЦИ.

Армянский кошелек: создано мощное портмоне с пятью уникальными функциями



В Армении создан один из самых мощных на сегодняшний день кошельков в мире с пятью уникальными функциями.

1. Кошелек под названием Volterman обладает функцией GPS, которая помогает владельцу легко найти его или понять, где он находится, в случае кражи. GPS показывает местонахождение кошелька вне зависимости от того, в какой точке мира он находится.

2. В кошелек встроена камера. Она фотографирует лицо грабителя и отправляет фото-

графию владельцу кошелька на телефон. Как только кошелек теряется, в нем автоматически подключается функция lost mode, что посылает сигнал камере сфотографировать лицо человека, который открывает кошелек.

3. Volterman имеет Bluetooth alarm (оповещатель), который синхронизируется с телефоном владельца кошелька и посылает звуковые сообщения, если расстояние между кошельком и владельцем увеличивается. Умный кошелек также сам «пикает», когда владелец далеко уходит без телефона.

4. Кошелек обладает также функцией power bank, позволяющей заряжать телефон и другие гаджеты.

5. Volterman может не только заряжать телефон, но и обеспечивать устройство интернетом благодаря функции WiFi hotspot. Возможность «раздавать» WiFi h делает «армянский» кошелек уникальным в своем роде девайсом.

У создателя кошелька Азата Товмасына идея создать такое умное портмоне родилась,



когда один из его детей положил кошелек за телевизор, а члены семьи, подумав, что кошелек и документы в нем пропали, потратили много времени для восстановления всех документов и банковских карт.

При этом кошелек со всеми своими функциями имеет достаточно скромные габариты и сделан из натуральной кожи. Дизайн кошелька полностью разработан в Армении, но производство налажено в Китае. Продажу кошелька планируется начать с 2018 года.

ՈՉ ՈՔ ԶԻ ՄՈՌԱՑՎԵԼ, ՈՉԻՆՉ ԶԻ ՄՈՌԱՑՎԵԼ



Թեև Հայրենական Մեծ պատերազմից տասնամյակներ են անցել, սակայն քաջերի փառքն ու անցած հերոսական ուղին հավերժ կմասն մեր պատմության փառապանծ էջերում: Հայրենական Մեծ պատերազմին Լոռու մարզի Մարգահովիտ (Համգաչիման) գյուղից մասնակցած 1297 մարդուց տուն չեն վերադարձել 284-ը: Իրենց անունը փառքով պսակածների թվում էին 99-ը՝ հրաձգային դիվիզիայի հրամանատար, գվարդիայի զենդապետ Զաքար Դերձյանը, երեք անգամ հերոսի կոչման ներկայացված, լեգենդար հետախույզ Մուկուչ Բեկչյանը, փառքի 2 շքանշանակիր Իվան Զուլայանը... շատերը: Մակայն Համգաչիմանի անունը աստղերին հասցրեց մի մարդ, ով իր ապրած կյանքով ցույց տվեց հերոսության տանող ուղին: Նա Խորհրդային Միության հերոս Ավագ Անտինյանն է:

Ավագ Վարդանի Անտինյանը ծնվել է 1917 թ. հունվարի 15-ին Համգաչիման գյուղում: Նախնական կրթությունն ստանալով գյուղի դպրոցում Ա. Անտինյանը սկսում է աշխատել կոլտնտեսությունում: 1939 թ. մեկնում է Խորհրդային բանակ: Հայրենական Մեծ պատերազմը դիմավորում է Զապորոժիե քաղաքում: Բելգյա Ցերկով քաղաքի պաշտպանական մարտերից մեկի ժամանակ վիրավորվում է, փոխադրվում Գորլովկա քաղաքի հոսպիտալ: Դեռ լրիվ չապաքինված խնդրում է իրեն ուղարկել ռազմաճակատ, սակայն մերժում է ստանում: Դիմում է դարձյալ, այս անգամ խնդրանքը բավարարվում է, վերադառնում է ռազմի դաշտ: Շուտով Ա. Անտինյանին վրստահվում է հրանոթի հաշվարկի հրամանատարությունը: Լուրատ գետի գետանցման ժամանակ Ա. Անտինյանի հրանոթային անձնակազմը ոչնչացնում է թշնամու երեք գնդացրային կետ, երեք բլինդաժ և կենդանի ուժ: Մարտից հետո գնդի հրամանատարը անձամբ է շնորհակալություն հայտնում Անտինյանին նրան ներկայացնելով կառավարական պարգևի: Մարտերից մեկում դարձյալ վիրավորվում է: Շարք վերադառնալով աչքի է ընկնում վճռական մարտերում, արյունալի կոծվեցին ցուցաբերելով հերոսություն ու երկաթյա կամք: Ակտիվորեն մասնակցում է Չեռնովցի քաղաքի ազատագրմանը դուրս գալով

Հարավային Բուդ, ապա Պրուտ գետերի ափերը: Տիսա գետի գետանցման ժամանակ երրորդ անգամ է վիրավորվում, հոսպիտալում ապաքինվելուց հետո կրկին շարք վերադառնում: 1944 թ. հունիսին Լեհաստանում Ա. Անտինյանը հասնում է իր նախկին գործառնին 353-րդ գվարդիական, եռակի շքանշանակիր, «Չեռնովցյան» հակատանկային գնդին: 1944 թ. հուլիսի 23-ին Լեհական Ցարոսլավ քաղաքից 7 կմ հեռավորության վրա գտնվող Պեկին բնակավայրը երեք կողմից շրջապատված էր, հարձակում էր սպասվում, որին ամեն գնով պետք էր դիմակայել, թիկունքում հոսում էր Վիսլա գետի Սան վտակը: Գումարտակի հրամանատարը Ավագ Անտինյանին հանձնարարում է ղեկավարել պաշտպանական դիրքերը: Առջևից շարժվում էին թշնամու 15 տանկ և 1 ինքնագնաց մարտկոց: Անտինյանի ղեկավարած հաշվարկը ոչնչացնում է 7 տանկ և ինքնագնաց մարտկոցը, բայց ավաղ, արհասիրտ համգաչիմանցին մենակ է մնում, միակ կենդանի մնացած ընկերը, գիտակցությունը կորցրած, արնաքամ էր լինում: Ուղիղ նշանառությամբ Անտինյանը արձակում է զրահափար արկերը, իրար ետևից սկսում են բոցավառվել մնացած 8 տանկերը:

Մնացած տանկերը բոցավառվելուց հետո սկանցիս հասավ «ուռռան»: Դիվիզիայի ճանապարհը դեպի Կրակով արդեն բաց էր: Նույն պահին ուսիս զգացի մեկի ձեռքը: Շրջվելով տեսա մեր դիվիզիայի հրամանատարին: Նա ինձ գրկեց, համբուրեց, - վերհիշել է Ա. Անտինյանը:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1944 թ. սեպտեմբերի 23-ի հրամանագրով Ավագ Վարդանի Անտինյանը արժանանում է Խորհրդային Միության հերոսի կոչման պարգևատրվելով «Ոսկե աստղ» մեդալով և «Լենինի շքանշանով»: Գվարդիայի ավագ Ավագ Անտինյանը հրավիրվում է Մոսկվա Կրեմլ, որտեղ էլ նրան պարգև անձամբ է հանձնում ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահ Մ. Կալինինը: Պարգևը հանձնելիս Կալինինը ասել է.

- Ընկեր Անտինյան, մեր հայրենիքը հպարտ է քո սխրանքով: Քեզ շնորհավորում եմ մեր հայրենիքի բոլոր զինվորների անունից:

- Իմ կյանքը պատկանում է հայրենիքին, -

պատասխանել է Անտինյանը:

Ա. Անտինյանը պարգևատրվել է նաև «Հայրենական մեծ պատերազմի 1-ին աստիճանի», «Փառքի 2-րդ աստիճանի» շքանշաններով, «Վարչակազմի ազատագրման», «Գերմանիայի դեմ տարած հաղթանակի» մեդալներով, այլ մեդալներով, բազմաթիվ շնորհակալագրերով, պատվոգրերով: Պատերազմից հետո Ա. Անտինյանը անցնում է խաղաղ աշխատանքի՝ շուրջ 15 տարի ղեկավարելով Համգաչիմանի գյուղատվեստի գործկոմը: 1985 թ. նկարահանվում է ֆիլմ Անտինյանի սխրանքների մասին: Ավագ Անտինյանը կյանքից հեռացավ 1989 թ.: Մարգահովիտի մշակույթի տան պատի մեջ տեղադրված է Ա. Անտինյանի հուշասալիկը: Ա. Անտինյանի անունը հավերժացած է նաև Երևանի «Հաղթանակ» զբոսայգու հերոսների ծառուղու երկրորդ կողողում: 2005 թ.-ից Մարգահովիտի կրթամարզամշակութային համալիրը կոչվում է ԽՍՀՄ հերոս Ավագ Անտինյանի անվամբ:

Եվ ահա այդ համալիրի բակում հերոսի 100-ամյա տարելիցի առթիվ մայիսի 9-ին մեծ հանդիսավորությամբ բացվեց Ավագ Անտինյանի բրոնզաձույլ կիսանդրին: Քանդակի հեղինակն է ՀՀ վաստակավոր նկարիչ, քանդակագործ Համլետ Մատինյանը, ով նշեց, որ կարգը չունեն հերոսի կենսագրությանը ծանոթանալու քանդակը կերտելու համար, քանի որ նույն գյուղից է և բազմիցս է լսել նրա հերոսական մարտական ուղու մասին: Կիսանդրու բացման պատիվը տրվեց հերոսի համագյուղացի ու բարեկամ, Հայրենական Մեծ պատերազմի վետերան Արամ (Օնիկ) Անտինյանին, հերոսի թոռ Վարդան Անտինյանին և ծոռ Վոլոդյային: Մայիսյան հաղթանակների շնորհիվ, կիսանդրու բացման օրհնության խոսք ասաց Մարգահովիտի հոգևոր հովիվ Տեր Սողոմոն քահանա Ավետիսյանը: Համայնքի ղեկավար Սամվել Անանյանը ասաց. «Մեծ հայրենականում բազմաթիվ ազգերի հետ միասին քաջարի հայորդիների սխրանքով նվաճած հաղթանակը մեր երկիրը փրկեց աղետներից և հնարավորություն տվեց կառուցելու և արարելու խաղաղ օրերում: Այսօր հպարտությամբ բացում

ենք հերոսի կիսանդրին, նշում նրա 100-ամյակը: Շնորհավորում են բոլորիս փառավոր հաղթանակների առթիվ»: Մարգահովիտի միջնակարգ դպրոցի տնօրեն, «Մարգահովիտցիների Ջորալիզ» ՀԿ-ի նախագահ Աշոտ Անտինյանը ասաց. «Հայարտ եմ, որ բացում ենք մեծ հերոսի կիսանդրին, որը ոգեշնչման մեծ աղբյուր է: Շնորհակալություն «Մարգահովիտ» բարեգործական հիմնադրամին, Մարգահովիտի գյուղապետարանին, «Մարգահովիտցիների Ջորալիզ»-ի և, իհարկե, միջոցառման բոլոր կազմակերպիչներին ու աջակիցներին»: Գայանե Անտինյանը հերոսի թոռնուհին, ով նաև այս գործի ամենաեռանդուն կազմակերպիչներից էր, ասաց. «Մենք ունենք փառահեղ պատմություն, որն ասես սուրբ հոգի ունի և թեև առած տարածվել է աշխարհում: Այդ պատմության մեջ իր տեղն ունի Ավագ Անտինյան վեհ համազայնացին, հերոսը, իմ բարի ու հոգատար պապը: Մյուսին տեսնելուց հետո ինքուր ինքուր կատարումներով հանդես եկան ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, դրամատուրգ Մամվել Խալաթյանը, ասմունքող, դերասան Զիվան Գասպարյանը, Վա-



նաձորի «Հորովել» երգի-պարի համույթի գեղարվեստական ղեկավար և մենակատար Արմեն Ներսիսյանը, Արովյան քաղաքի «Հուշեր» պարային անսամբլը (գեղարվեստական ղեկավար՝ Էդգար Ավետիսյան, պարուսույց՝ Սոսե Անտինյան), ԵԿՄ Արովյանի բաժանմունքի փոխնախագահ Մելիքսեթ Մալաթյանը: Համայնքի ավագանու որոշմամբ քանդակի հեղինակ Համլետ Մատինյանին շնորհվեց Մարգահովիտ համայնքի պատվավոր քաղաքացու կոչում, ինչի վկայագիրը Համլետ Մատինյանին հանձնեց համայնքի ղեկավար Սամվել Անանյանը: ԿՄՄՀ-ի

դաիլիճում գուսան Զաքարյանի «Քաջ Անտինյան» երգը կատարեցին աշակերտներ Անդրե Զոհրանյանը և Գուրգեն Ղուկաշյանը: Ավագ Խառատյանը ներկայացրեց հերոսի կենսագրությունը: Ավագ Անտինյանի մասին ջերմ խոսքեր ասացին, հուշեր պատմեցին հերոսի թոռ Գոհար Անտինյանը, վաստակաշատ մանկավարժ Մարգարե Դերձյանը, ազատամարտիկ, թումանյանագետ Էդգարը Անտինյանը, հերոսի թոռներն ու ծոռները:

Հավերժ փառք մեր հերոսներին:

Ավագ ԽԱՌԱՏՅԱՆ

Ձեր պատմությունը միշտ հիշեք, հայե՛ր

Նացիստական Գերմանիայի նկատմամբ նախկին ԽՍՀՄ-ի և Խորհրդային Միության բոլոր ժողովուրդների Մեծ հաղթանակի 72-րդ տարեդարձն արդեն հետևում է: Չեմ պատրաստվում նկարագրել Մոսկվայում և մեր Արցախում տեղի ունեցած գորահանդեսները. ում հետաքրքրում էր, կարող էր դիտել և ինքը: Դա ավանդույթ է, որ ընդունված է անվանել Սրբազան: Իհարկե: Չէ որ այն պատերազմը ոչ միայն Մեծ հայրենական, այլև Սրբազան անունն էր կրում: Հիշեք, մի լավ պրպտեք ձեր ուղեղի ծալքերում: Ինքնըստինքյան այն փաստը, որ Հայաստանի ողջ ղեկավարությունը տոն օրերին մեկնել էր Արցախ, արդեն վկայում է այն մասին, թե հայ ժողովրդի համար որքան կարևոր է Մայիսի 9-ի գորահանդեսի անցկացումը Արցախում: Անգամ եթե գորահանդես չլինեք էլ. պարզապես այդ օրերին Արցախում լինելը:

«Կոռ տարեթիվ» էլ չէ Մեծ հաղթանակի 72-րդ տարեդարձը: Եվ ամբողջ աշխարհում այդ օրն անցավ շատ ավելի աննկատ, քան 2015 կամ 2016 թվականներին: Մակայն Մեծ հայրենականի հետ կապված բոլոր տարեթվերն ամեն հայ պարտավոր է հիշել, այն տարիների անցքերը ժամանակն է վերափոխատարել: Օգտակար օրինակ է 2017-ի Մայիսի 9-ը. Երևանում, վերջապես, շատ թե քիչ կազմակերպված ձևով տեղի ունեցավ «Անմահ զորագունդ» միջոցառումը: Նույնիսկ Ստեփանակերտում նման միջոցառում անցկացվեց: Եվ դա կարևոր է, անգամ չափազանց կարևոր: Ուղղակի ճշշող է մի բան: Ելնելով նույնիսկ այն, միայնացիք շատ տարբերվող տարեթվերից, որոնց մասին տեղեկություններ որքան ուզեք կան տարբեր աղբյուրներում, մեր ժողովուրդն այն տարիների պատերազմի ամենակրթիվ մասնակիցներից մեկն է: Համոզիչ լինելու համար պարզապես մի քանի թիվ բերեմ տարբեր աղբյուրներից, այդ թվում՝ այն, որոնք ստորագրված են մեր լայնորեն հայտնի գեներալների ձեռքով. ազգանուններ չեմ նշի, դա չէ կարևորը:

«Հայրենական մեծ պատերազմի ժամանակ գոհվել են մարտական գործողություններին մասնակցած 800 հազար հայերից 450 հազարը»: «Մեծ հայրենականի ռազմաճակատներում ֆաշիստ զավթիչների դեմ մարտնչել են հայ ժողովրդի ավելի քան 600 հազար ուսուրբեր ու դուստրեր»: «1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է մոտ 600 հազար հայ, որոնցից մոտ 300 հազարը գոհվել է»: «1941 թվականի հունիսից մինչև 1945-ի մայիս բանակ է զորակոչվել ավելի քան 500 հազար հայ, և դա եղել է ժողովրդի նշանակալի մասը (1941-ի տվյալներով, հանրապետության բնակչության թիվը եղել է մեկ միլիոն 400 հազարից էլ պակաս): 175 հազար հայ գոհվել է մարտական գործողությունների ընթացքում»: Ահա, խնդրեմ: Ի նշ է սա, եթե ոչ սեփական պատմությունը չիմանալու, սեփական հերոսների չճանաչելու մեր քարացած ու ամոթալի «ավանդույթը»: Ոչ, խոսքը նրանց, մասին չէ, ում ամբողջ աշխարհն է ճանաչում, այլ նրանց, ովքեր հաճախ այդպես էլ, անանուն են ժառանգել: Կորել են անհետ: Նրանց, ովքեր, ինչպես պարզել է Հյուսիսային Կովկա-



սում հայրենասիրական որոնողական արշավախմբերից մեկը, անօրինակ սխրանքով կասեցրել են Էսեսական «Էդելվալդի» գործողությունները լեռներում, և, ինչպես պարզվել է, խորհրդային զինծառայողների այդ խմբի զգալի մասը հայ է եղել, ասենք, նրանց հրամանատարն էլ է հայ եղել:

Շատ ավելի հստակ են Արցախին վերաբերող թվերը: Կարդանք միասին. «ԼՂԻՄ-ից զորակոչվել կազմում էր բնակչության մոտ 32 տոկոսը, այն դեպքում, երբ ամբողջությամբ վերցրած ԽՍՀՄ-ում այդ թիվը կազմում էր 6 տոկոս: Համեմատության համար. Գերմանիայում համընդհանուր զորահավաքի ժամանակ բնակչության զորակոչի թիվը 16 տոկոսից չէր անցնում: Եվ եթե ազնիվ լինենք, ապա 32 տոկոսը ոչ թե պարզապես ահալոր է, այլև աղետալի, քանի որ ստացվում է, որ ԼՂԻՄ-ի յուրաքանչյուր երեք բնակիչից մեկը զորակոչվել է կամ կամավոր մեկնել բանակ: Եթե նկատի առնենք, որ բնակչության մոտ 50 տոկոսը կանայք են լինում, ապա ժառանգ մոտ 20 տոկոսը ծեղեր ու արական սեռի երեխաներ են եղել, իսկ ժառանգ ամբողջ արական սեռի բնակչությունը եղել է ռազմաճակատում: Կամ ստացվում է, որ ռազմաճակատ են ուղարկվել նաև մեծ թվով կանայք: Մյուս կողմից, արցախյան պատերազմից մենք գիտենք, որ Ադրբեյջանի ղեկավարությունը միաժամանակ լուծում էր նաև մյուս տեղաբնիկ ժողովուրդների՝ հիմնականում լեզգիների, ավարների, թալիշների ազգային հարցը: 1939 թ. համամիութենական մարդահամարի տվյալներով, Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի բնակչության թիվը կազմում էր 150 838 մարդ, որոնց 90 տոկոսը հայեր էին: Այդ թվակազմից Հայրենական մեծ պատերազմի ժամանակ զորակոչվեց կամ կամավորագրվեց 45 000 մարդ կամ

բնակչության 32 տոկոսը (Խորհրդային Միության ընդգրկմամբ, 194 միլիոնից՝ 11 միլիոնը, այսինքն՝ 6 տոկոսը): Տոկոսային առումով ԼՂԻՄ-ից գորակազմեց 5 անգամ ավելի շատ, քան ամբողջ երկրում: ԼՂԻՄ-ից ռազմաճակատ մեկնած դարաբաղից հայերից, տարբեր տվյալներով, գոհվել է 18 000-ից մինչև 22 000 մարդ, ինչը կազմում է բնակչության ընդհանուր թվի 12-15 տոկոսը: Այսպիսով, հայաբնակ փոքրիկ ինքնավար մարզից, որը պատերազմի տարիներին գտնվում էր խոր թիկունքում, պատերազմում գոհվել է ամեն յոթերորդ-ութերորդ բնակիչը, ինչը մեծապես գերազանցում էր միջին միութենական մակարդակը և համեմատելի էր, ավելի շատ, Բելոռուսիայի կոռուստների հետ, որտեղ, ինչպես հայտնի է, կատաղի մարտական գործողությունների և բազմամյա ֆաշիստական օկուպացման պայմաններում գոհվել էր ամեն չորս բնակիչից մեկը»:

Ինչ է երևում այս թվերից. նախ, որ, չնայած տվյալների բավական մեծ «տատանումներին» (սկսած «ավելի քան 500 հազարից» կամ «մոտ 600 հազարից» մինչև «800 հազար հայ» գորակազմված կամ կամավորագրված), պետք է խոստովանել, որ 1941-45 թթ. Մեծ հայրենականի մասնակիցների ծառանգների քանակը ժամանակակից Հայաստանում և Արցախում պետք է, անկասկած, շատ ավելի մեծ լիներ, քան այն մարդկանց քանակը, որ 2017-ի Մայիսի 9-ին մասնակցում էին «Անմահ զորագունդ» ակցիային: Բայց ուր են նրանք՝ պատերազմի մեր մասնակիցների սերունդները: Այլ երկրներում, որտեղ նույնքան բարձր են պատերազմի մասնակցության ցուցանիշները, «Անմահ զորագունդ» ակցիան արդեն երրորդ տարին նաև իրենց նախնիների պատգամին հասարակության ակտիվ խավի, նույնիսկ իշխանության նվիրվածության ցուցանիշ է:

Մի թե Հայաստանի և Արցախի ներկա դեկադարության ոչ մի «օղակի» ընտանիքներում Հայրենական մեծ պատերազմի ոչ մի մասնակից չի եղել: Ես ամենին նպատակ չունեմ ասելու, թե Մերժ Սարգսյանն ու Բակո Սահակյանն անձամբ պետք է գլխավորեին շարապյունները նրանց, ովքեր, այնուամենայնիվ, պիտի որոշած լինեին մասնակցել «Անմահ զորագունդ» ակցիային: Ուզում եմ ասել, որ մեր երկրի իշխանությունները կարող էին մի փոքր ջանք գործադրել և հարյուրավոր, բուցե և հազարավոր հայերի համար հնարավորություն ստեղծել քայլաբար մասնակցելու «Անմահ զորագունդ» շարքերում, բայց այդպես էլ չկարողացան այդ բանն անել ֆինանսական կամ կազմակերպական դժվարությունների նկատառումով, ուղղակի հնարավորություն ստանալ պարզապես ներկա գտնվելու մի արարողության, ինչպես մարգարեաբար ասել է Վանգան, երբ մեռելները կկանգնեն ողջերի կողքին: Մերունդների միասնականացման արարողության:

Երկրորդ՝ այդ թվերն արժանի պատասխան են նրանց, ովքեր ոչ այն է թյուրիմացաբար, ոչ այն է չարատորեն նորից հիշել են այն «հին երգը», թե «դա մեր պատերազմը չէ», իբր, «հայերն ստիպված էին»: Ավագ մորաքույրս ռազմաճակատ էր մեկնել կամավոր: Ջանքել աղջիկ: Տատիկս կրտսեր եղբայրը նույնպես որպես կամավորական էր ռազմաճակատ մեկնել: Ի դեպ՝ գոհվել է: Եվ դա իմ մեծ, հսկայական տոհմի ներկայացուցիչներից ընդամենը երկուսի մասին: Բայց որքա՛ն այդպիսի հայեր են առհասարակ եղել Հայաստանում, Արցախում, ընդհանրապես ամբողջ ԽՍՀՄ-ում: Չէ՛ որ այն հայ սպան, որն իր խումբը դեպի լեռներ էր առաջնորդում փակելու «Էդելվայսի» մարդաբանական ճամփան, նույնպես կամավորական էր և ամենին էլ պրոֆեսիոնալ գլխավորական չէր, սիրողական լայինիստ էր ընդամենը: Եվ ինչու է մեր ժողովրդի մի մասն իրեն իրավունք վերապահում որոշում կայացնելու մեր նախնիների փոխարեն, թե ինչն է ճիշտ եղել և ինչը սխալ 1941-ի ամռանը: «Ազատականների» կամ նկրախական բանդերականների կասկածելի դափնիները ըր հանգիստ քնել չեն թողնում: Ցավ ու ցատում. միայն այսպիսի զգացումներ կարող են առաջացնել այն «հոգի աղտոտողները», որոնցով լի էին սոցցանցերը 2017-ի Մայիսի 9-ին:

Մենք երկար տարիներ՝ սկսած 1992-ի մայիսից, անընդհատ կրկնում ենք. հայեր, ախր, հիմա՛սի էր, որ Մայիսի 9-ի օրը մեզ համար Եռատոն է: Եվ Մեծ հայրենականում տարած հաղթանակը, և ԼՂՀ-ի պաշտպանության բանակի ստեղծումը, և Շուշիի ազատագրումը, վերջապես: Շենք այս հերթականությամբ և ուրիշ ոչ մի կերպ: Մի շատ պարզ պատճառով. եթե չլիներ հաղթանակը Գերմանիայի նկատմամբ, համոզված եմ, մեր ազգը չէր լինի նաև 1992-ի Մայիսի 9-ին: Ասեմ ինչու: Լինեի Հայաստանի ցանկացած իշխանության փոխարեն, երկաթյա որոշմամբ կստիպելի, որ մեր ազգն ամեն տարի նշեր Ստալինգրադում գերմանացիների պարտության օրը: Բայց ինչու՞ ապալի՝ «կստիպելի»: Դե, որովհետև դեռ կան կարճամիտներ, որոնք կարծում են, թե «գերմանացիների օրը լավ կլիներ»: Բայց այն տարիներին Հայաստանում կային զորամիավորումներ, որոնք Թուրքիայից պաշտպանում էին խորհրդային հարավարևմտյան սահմանը: Այն տարիներին ոչ ոքի համար գաղտնիք չէր, որ թուրքերն սպասում էին հենց Ստալինգրադի ճակատամարտի ավարտին, որ Գերմանիայի կողմից պատերազմի մեջ մտնեին: Այնպես էր, Արևելյան ճակատում գերմանական զորքերի ցանկացած, անգամ

տեղային պարտություն, գերմանական ֆաշիզմի ջախջախմանը հայ մարտիկների ցանկացած մասնակցություն ցանկացած շարքային հայի համար նշանակում էր նաև փրկություն նոր ողբերգությունից՝ կապված հայ ժողովրդի պատմության մեջ թուրքերի դերի հետ: Ողջ են դեռ այն մարդիկ, ովքեր շատ լավ հիշում են. այն ժամանակ Հայաստանում բոլորին նախապատրաստում էին գյուղերից ու քաղաքներից բարձրանալու լեռները՝ ի դեպս, եթե Թուրքիան մտներ պատերազմի մեջ: Եվ ես նրանցից ոմանց հետ, նրանց ընտանիքների անդամների հետ անձամբ ծանոթ եմ: Ողջ են նաև նրանք, ովքեր հիշում են. 1945-ից հետո խորհրդային բանակի հայկական դիվիզիաները կազմ ու պատրաստ հրամանի էին սպասում ազատագրելու Կարսի մարզը:

Այլ բան է, որ այն ժամանակ էլ Հայկական հարցը աշխարհաքաղաքականության գոյ դարձավ: Ու դեռ էլի կասկածներ ունեցող հայեր կան: Այդ դեպքում, ահա, խնդրեմ, սրանք նացիստ ֆյուրեր Ադոլֆ Հիտլերի խոսքերն են՝ ասված 1942-ի դեկտեմբերին. **«Ես չգիտեմ, թե այդ վրացիներն ինչպես կպահեն իրենց: Նրանք թյուրքական ժողովուրդներն չեն պատկանում... Ես հուսալի եմ համարում միայն մուսուլմաններին... Մնացած բոլորին ես անհույսալի եմ համարում: Այս պահին այդ զուտ կովկասյան գումարտակների կազմավորումը ես շատ վտանգավոր եմ համարում, մինչդեռ ոչ մի վտանգ չեմ տեսնում զուտ մուսուլմանական զորամիավորումների ստեղծման գործում... Չնայած Ռոզենբերգի ու զինվորականների բոլոր հայտարարություններին, ես չեմ վստահում նաև հայերին»:** Եվ գուր չէ, որ լեզեռներին առաջինը, որ պետք է «օգնեք» նացիստներին, հենց «Թուրքեստանյան լեզեռներ» էր, որի ստեղծումը թվագրված է դեռ 1941-ի նոյեմբերին:

Այնպես էր, Հիտլերի գերվատահությունը թուրքերի ու Թուրքիայի, առհասարակ թյուրքական ժողովուրդների նկատմամբ երևակայության աշխարհից չէ, դա ավելի քան իրական ապացույց է այն բանի, որ եթե չլինեի 1945-ի մայիսը, չէր լինի նաև 1992-ի մայիսը: Բայց ահա թե ինչ է գրել ռուս «սպիտակ վտարանդիական» պատմաբան Ա. Մ. Կազանցը կովկասյան լեզեռներական ստորաբաժանումների մասին. **«Բաժանման (Ռուսաստանի-խմբ.) պլանների կատարման կարգով, տարբեր ազգությունների ռազմագերիներից (և կամավորներից) ստեղծվում էին գումարտակներ, որոնք զգալիորեն անտեղյակ էին դաստիարակվում ոչ միայն բոլշևիզմի, այլև ռուսական ամեն ինչի նկատմամբ. արհեստականորեն հրեշավոր, չարագույժ շովինիզմ էր բորբոքվում... Նման գումարտակներում քարոզչությունը ոչ թե հակախորհրդային, այլ հենց հակառուսական բնույթ էր կրում: Ռուսներին անվանում էին ոչ այլ կերպ, եթե ոչ «զավթիչներ», «պատմական թշնամիներ»:** Ահա նաև գերմանական նացիզմի գլխավոր գաղափարախոս Ալֆրեդ Ռոզենբերգի վկայությունը. **«Կովկասի ցեղերի ու ժողովուրդների տարանջատումը միմյանցից... գերմանական հրամանատարության համար կեղծացներ նրանց նկատմամբ գերշխանության հաստատումը... Տարբեր ազգությունների միջև հակասությունների առաջացման նպատակով զորամասի օգտագործումն արդեն քաղաքական հանգամանք է»:** Ահա թե ինչ էր սպասելու մեզ, ընդ որում, մեզ բոլորիս՝ կովկասյան տարածքի բնակիչներին, եթե, ասենք, գերմանացիները Թուրքիային հնարավորություն չտային զավթելու տարածաշրջանը և, ասենք, փորձելու կրկնել իր գանգվածային հանցագործություններն ընդդեմ մարդկության, որ մինչ այդ իրականացվել էր Արևմտյան Հայաստանի, Համլենի, Գիլիկիայի ոչ թուրքական ժողովուրդների նկատմամբ: Հայաստանին, ամբողջ Կովկասին կսպասեին անթիվ ու անվերջանալի «վեճեր», գուցե և պատերազմներ, ուր գերմանացիները հանդես կգային իբրև «գերազույն իրավարարներ»: Թուրքերի հանդեպ Հիտլերի առանձնահատուկ «սիրտ» ու վստահության պարագայում, ինչը նա չի քաշվում խոստովանել, դժվար չէ գուշակել, թե ինչ էր սպասելու մեր ժողովրդին: Բայց փաստ է նաև այն, որ Ստալինգրադում հաղթանակ տանելու դեպքում գերմանացիները «կանաչ լույս» կվառեին հենց Թուրքիայի առջև. Անդրկովկասում հայերի սպանդով զբաղվում էին իրենք թուրքերը:

Ու վերջին հիշեցումը. գերմանացիները Ստալինգրադում անձնատուր էին 1943-ի փետրվարի 2-ին: Այս տարի հերթական թուրքական օկուպացման սպառնալիքից մեր ազգի, ինչպես և Կովկասի մյուս ժողովուրդների խուսափելու 74-րդ տարեդարձն էր: Այնպես էր, 2018-ը կլինի երկրորդ համաշխարհային պատերազմի մեջ Թուրքիայի մտնելու և նրա կողմից ամբողջ Կովկասն օկուպացնելու սպառնալիքից Հայաստանից և Կովկասի փրկության հոբելյանական, «կարմիր» 75-րդ տարեդարձը: Ուզում եմ հուսալ, որ Հայաստանում և Արցախում իշխանությունները բավականաչափ ողջամտություն կունենան, որպեսզի 2018-ի փետրվարի 2-ը նշանավորեն պետական մակարդակի միջոցառումներով:

Ձեզնից հետո ի՞նչ եք թողնելու, հիշելո՞ւ են ձեզ...

Սահմանադրական դատարանի նախկին անդամ Վալերի Պողոսյանը բաց նամակ է հղել օլիգարխներին: Իր նամակում նա բերում է եվրոպացի մեծահարուստների օրինակը և թերևս, հռետորական հարցեր հնչեցնում հայաստանյան օլիգարխներին ուղղված:

«Միբելի՛ բարեկամ: Անկեղծ ասած, երբ գրեցի «սիրելի», անմիջապես փոշմանեցի, քանզի ինձ համար դուք ոչ «սիրելի» եք, ոչ «հարգելի», ոչ էլ «մեծարգո», պարզապես քաղաքավարական կանոնները ստիպեցին թողնել այդ բառը: Վերջերս առիթ եղավ վերստին կարդալու իտալական Մեդիչինների գերդաստանի պատմությունը, ինչն էլ ստիպեց ձեզ դիմել:

Բանն այն է, որ այդ ընտանիքը իր ժամանակին եղել է եվրոպայի ամենահարուստը, որը ֆինանսավորել է եվրոպական թագավորներին ու իշխաններին: Բայց այսօր Մեդիչինները ժառանգել են պատմության էջերում և հիշվում են ոչ թե իրենց հարստությամբ, այլ մշակութային ժառանգությամբ, որ թողել են Իտալիային ու ամբողջ Եվրոպային: Այսօր նրանք հարգանքով հիշվում են որպես «Վերածննդի կնքահայր»: Այսօր իտալացիները հպարտությամբ ամբողջ աշխարհին ցուցադրում են Ֆլորենցիան:

Այդ նրանք են ի հայտ բերել և աշխարհին տվել Վերածննդի հանձնարել ճարտարապետներին, նկարիչներին, քանդակագործներին (Լեոնարդո դա Վինչի, Միքելանջելո և շատ ու շատ ուրիշներ): Մի այլ օրինակ: Պորտուգալիայում այսօր էլ մեծագույն հարգանքով են հիշում մեծահարուստ Գ. Գյուլբենկյանին, բայց ոչ նրա հարստության համար, այլ այն հարուստ մշակութային ժառանգության համար, որ նա նվիրաբերեց Պորտուգալիային:

Եվ անցյալում, և այսօր նրա հիմնադրամի կրթաթոշակներով են ուսում ստացել բազմաթիվ ուսանողներ, որոնք դարձել են հանրահայտ քաղաքական, հասարակական, մշակութային գործիչներ: Այս տողերը գրելիս ակամա հիշեցի Ալ. Մակեդոնացու անվան հետ առնչվող մի պատում, ըստ որի նրան թաղելիս դագաղում Մակեդոնացու ձեռքերը եղել են դագաղից դուրս պարգած, այսինքն նա դրանով ցանկացել է ի տես մարդկանց հայտնել, որ ինքը իր հետ ոչինչ չի տանում, այլ թողնում է իր գործը: Չերկարացնեմ, ուղղակի ուզում եմ հարցնել իսկ դուք ձեզնից հետո ի՞նչ եք թողնելու, հիշելու և են ձեզ, թե հայհոյելու են: Ուր են ձեր դավիչները, միքելանջելոները:

Բայց հանգիստ թողնեք եվրոպացիներին, դառնանք ինքներս մեզ: 20-ական թթ. Ա. Մյասնիկյանը Հայաստան հրավիրեց մի մեծ խումբ հայ մտավորականների, որոնք իրենց պարտքը համարեցին թողնել բարեկեցիկ կյանքը, գալ քանդակաձև Հայաստան և շենացնել այն: Այդ նրանք էին, որ կյանքի կոչեցին Երևանի համալսարանը և գիտությունների ակադեմիան: Բայց դուք գիտե՞ք արդյոք, թե ովքեր էին այդ մտավորականները և ինչպես էին դարձել նշանավոր գիտնականներ: Նրանք հիմ-



նականում լինելով աղքատ ընտանիքների զավակներ սովորել էին հայ մեծահարուստների կրթաթոշակներով:

Դա է պատճառը, որ մենք այսօր և՛ սիրով, և՛ հարգանքով ենք հիշում Ա. Մանթաշովին, Արամյաններին, Անանովներին և շատ ու շատ ուրիշներին: Այդ նրանք էին, որ հայաշատ վայրերում կառուցում էին եկեղեցիներ, դպրոցներ, օրիորդաց վարժարաններ, մշակութային օջախներ, հիվանդանոցներ: Այդ նրանց հիմնած դպրոցներում էին սովորում մեր շատ հայտնի մտավորականներ, և այդ դպրոցները այդ երկրների լավագույն դպրոցներն էին:

Այդ նրանք էին, որ շենացի Թիֆլիսն ու Բաքուն և շատ այլ քաղաքներ Կովկասում և այլուր: Նրանց բախտ չվիճակվեց շենացնել Հայաստանը. իսկ դուք, որ արժանացել եք այդ բախտին, չկարողացաք դրան արժանի լինել: Դուք նրանցից սովորեցիք միայն եկեղեցիներ կառուցել մոռանալով, որ նրանք դա կատարում էին հայապահպանության նպատակով, իսկ դուք ձեր անունը անմահացնելու համար: Այնինչ այսօր հրատապ է մեր հազարամյա կիսաքանդ եկեղեցիները վերականգնելը: Դուք տառապում եք մի հյուծիչ փառամոլությամբ և ցուցամոլությամբ:

Դուք ցանկանում եք մյուսներից տարբերվել ամենաթանկ մեքենայով, ամենաշքեղ առանձնատնով, ամենաշատ թիկնապահներով, ձեր կանանց շքեղ հագուստներով, ձեր երեխաներին թիկնապահներով դրաքոց ուղարկելով... Զթվարկեմ, դրանք շատ-շատ են: Բայց դուք չեք ուզում հպարտանալ ձեր զավակով, որ ծառայում է հայկական բանակում՝ ամենաճանր և վստահավոր դիրքերում: Երբեմն մտածել եք, թե ինչու է Անգլիայի արքայազնը ծառայում Բրիտանական զինված ուժերում, այն էլ ամենաճանր ռազմածովային ուժերում ռազմանավում, այսինքն բոլորի աչքի առջև:

Պատկերացնո՞ւմ եք անգլիական լորդը կամ մի որևէ այլ ազնվական խուսափի իր զավակին բանակ ուղարկել: Պատկերացնո՞ւմ եք ինչպես հասարակությունը կընդունի այդ ազնվականին: Ձեզնից ոմանք կարող են ասել, որ իրենց զավակները ծառայել են բանակում, բայց ախր դուք էլ գիտեք, մյուսներն էլ գիտեն, թե ինչպես մի «ծակ» մտած և ինչ պայմաններում:

Ների՛ր, բարեկամս, դու հարստացար, բայց ազնվական այդպես էլ չդարձար: Այսօր մեր խառնուրդները լեցուն են թուրքական ապրանքներով: Զե՛ որ թուրքի շահույթը դառնում է մի փամփուշտ, որից այսօր

գոհվում է հայ զինվորը:

Չէիք կարող մի քանի արտադրամաս կառուցել, որ այդ քոստ ապրանքը այստեղ արտադրվի: Մի թուրքի չափ էլ չկանք: Ժամանակը չէ, որ մենք արտադրենք այնպիսի ապրանք, որ վաճառվի Թուրքիայում և այլուր: Այսօր անընդհատ գլուխ ենք գոլում, թե որքան աշխատանք է կատարվել մեր բանակը վերազինելու համար:

Բայց ո՞ւր էիք դուք պարիլյան պատերազմից առաջ: Չգիտեիք, որ բանակում շատ բան չկար: Եթե չգիտեիք, ամուր ձեզ, իսկ եթե գիտեիք ու ոչինչ չձեռնարկեցիք, ավելի ամուր ձեզ: Դուք մասնաբաժին ունեք քաղաքից ավելի գոեթի հարցում: Միայն թե շատ եմ խնդրում, հանկարծ չասեք, թե դա ձեր գործը չէ: Չեմ ուզում շարունակել, թե ինչ մասնաբաժին ունեք գործազրկության, արտագաղթի, աղքատության և էլ շատ հարցերում: Ձեր ջանքերի շնորհիվ չէ՛ր, որ Հայաստանից խուսափում էր Քրդք Քրդքոյանը, և էլ շատ սփյուռքահայ մեծահարուստներ են խուսափում:

Պարզապես, ուզում են հիշեցնել, որ դուք շատ եք սիրում, որ ձեզ հարգեն, գովեն, ձեր կատարած քայլերը ցույց տան հեռուստատեսությամբ, պարզևատրվեք մեդալներով ու շքանշաններով, ստանաք գիտական աստիճաններ ու կոչումներ, դառնաք պատգամավոր... մի խոսքով՝ հազեցնեք ձեր սնապարծությունը: Ինչո՞ւ եք ուզում, որ ձեզ ընկալեն որպես «բիրդան աղա» կամ քաջ Նազար, որն իր ամբողջ իշխանությունը ցուցադրելու համար կարող է միայն ասել «գյադե ք, հիմա էլ դեսը կանգնեք»:

Հայերն և բուն Հայաստանում, և՛ բոլոր գաղթօջախներում հայտնի են եղել իրենց օրինապաշտությամբ: Իսկ այսօր: Ժամանակը չէ հասկանալու, որ օրինապաշտ լինելը լավագույն հպարտությունն է: Եթե առաջին միլիոնը ձեռք բերելու համար անօրինական ճանապարհը ամենալավն է, ապա հարստությունը պահպանելու և բազմապատկելու միջոցը օրինական բիզնեսն է: Զե՛ք կարծում, որ Արցախի հիմնախնդիրը լուծելու լավագույն միջոցը Հայաստանում և Արցախում Սահմանադրությամբ ապրելն է:

Ուզում եմ ձեզ մի խորհուրդ տալ: Ժամանակին թագավորները իրենց սովորում միշտ պահում էին մեկին (մոտավորապես այնպես, ինչպես Մելիք-Շահնազարը Պլլը Պուղուն), ով բացառիկ իրավունք ուներ թագավորին ասելու նրա արատները: Հետևեք այդ օրինակին, թե չէ կարող եք հայտնվել անդուր վիճակում: Ժամանակն է ուշքի գալ: Որքան արագ բուժվեք ցուցամոլությունից, այնքան լավ ձեզ համար:

Եղբայրաբար՝ Վ. ՊՈՂՈՍՅԱՆ

P.S. «Եղբայրաբար» բառը գրեցի անկեղծորեն և հուսով եմ, որ հետագայում չեմ փոշմանի», – նշել է Պողոսյանը իր գրած նամակում:

ԲՅՈՒՉԱՆԴԱԿԱՆ ԿԱՅԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱԶԳԻ ՄԻԱՊԵՏՆԵՐԸ

Ընդունված ճշմարտություն է՝ հայրենիքն այն ապահով և կենսունակ օրրան է, որտեղ հավերժ կենդանի են ժամում նրա շնորհալի և արժանավոր զավակները: Մակայն ճակատագիրը երբեմն դաժան է վարվում մարդկանց հետ և նրանց օտար ափեր է նետում, որտեղ ծնվում, ապրում և արարում են իրենց հայրենիքից ու ժողովրդից հեռու: Ազգությամբ հայ է, սակայն կյանքի պայմաններից դրդված դարձել է մեկ այլ երկրի ու ազգի պատմության մի մասնիկը:

Պատմական ճակատագրի կողմից հալածված վտարանդիներ էին այն հայերը, ովքեր հաստատվել էին Բյուզանդիայում: Նրանց գոյությունն այնտեղ պատահական չէր, այլ պատճառաբանված էր պատմական գործոններով և ուներ խորը քաղաքական-հասարակական արմատներ:

Հայ ժողովրդի մասսայական գաղթը դեպի Բյուզանդիա և այլ երկրներ կապված էին Հայաստանում այն ժամանակ ստեղծված անապահով կյանքի, ինչպես նաև արտաքին գործոնների, հիմնականում օտար զավթիչների շարունակաբար կրկնվող բռնությունների, ասպատակությունների ու տեղահանումների հետ: Խուսափելով մասսայական ջարդերից, ֆիզիկական բռնություններից ու հալածանքներից՝ հայ ժողովրդի առանձին զանգվածներ ամբողջ գերդաստաններով բռնում էին գաղթի ճանապարհը և հաստատվում իրենց համար համեմատաբար բարվոր վայրերում:

Հայերի զանգվածային արտագաղթի առաջին հոսքը դեպի Բյուզանդիա սկսվել է դեռևս 4-րդ դ. վերջերին, երբ Արևմտյան Հայաստանը հայտվեց նրա գերիշխանության տակ: Հայերը, հաստատվելով Բյուզանդիայում, բարեկամական հարաբերությունների մեջ մտնելով տեղի բազմազգ բնակչության հետ, բեռնում կյանքով սկսեցին ապրել, կարողացան իրենց դրսևորել տարբեր ասպարեզներում: Վաղ անցյալից մեզ են հասել բյուզանդական հայագից նշանավոր բազմաթիվ գործիչների անուններ, ովքեր, ձեռք բերելով որոշակի հռչակ և ճանաչում, անուղղակիորեն նպաստեցին իրենց ծնունդ տվող ժողովրդի համբավի տարածմանը:

Բյուզանդահայերը գործում մասնակցություն ունեցան կայսրության քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքին՝ դառնալով ոչ միայն մշակույթի և գիտության ակնառու գործիչներ, բարձրաստիճան պաշտոնյաներ, զորավարներ, դիվանագետներ, այլև կայսրեր և կայսրուհիներ, որոնց թիվը, ըստ որոշ հաշվարկների հասել է ավելի քան 30-ի: Նրանց թվում հիշատակվում են Հերակլիոս I-ի (610-641 թթ.), Փիլիպպիկոս Վարդանի (711-713 թթ.), Լևոն V Հայկազունի (813-820 թթ.), Աղդոնիկոս III Պալեոլոգոսի (1328-1341 թթ.), կայսրուհիներ Մարիանեի (8-րդ դար), Եփրոսինեի (823-827 թթ.), Թեոդորայի (842-856 թթ.) և այլոց անունները, որոնցից յուրաքանչյուրն իր գործունեությամբ որոշակի հետք է թողել այդ կայսրության պատմության մեջ: Այսպես Հերակլիոսների դինաստիայի (610-716 թթ.) հիմնադիր Հերակլիոս I-ը, որի հայ լինելն ապացուցել է իտալացի պատմաբան Անգելո Պերինչեն «Հերակլիոս կայսր» աշխատությունում (1905 թ.), պատմության մեջ դասվել է այն մեծ ինքնակալների շարքին, ովքեր կարողացել են իրենց ռազմական քաջությամբ և հմտությամբ հաղթահարել անհուսալի պատերազմների ընթացքը:

Լևոն V Հայկազունի կերպարն արտացոլվել է 17-րդ դարի գերմանացի նշանավոր գրող Անդրեաս Գրիֆիուսի «Լևոն հայը» ողբերգության մեջ, ում օրոք Բյուզանդիայում, երբ խստորեն սրվել էին պատկերամարտության և պատկերապաշտության միջև պայքարը, կայսրն անողորմ ահաբեկչություն էր սկսել պատկերամարտների դեմ, ինչից հետևանքով էլ դարձավ դավադրության զոհ:

Հունական եկեղեցու սրբերի շարքին է դասվել Թեոդորա կայսրուհին, ով գորավար Մանուել Մամիկոնյանի եղբոր Մարիանոսի դուստրն էր: Նա գահակալել է 842 թ.-ից սկսած որպես որդու՝ Միքայել III կայսեր (842-867 թթ.) խնամակալուհի: Նրա մասին պահպանվել է մի ավանդություն, թե իբր եղել է այն գեղեցկուհիների շարքում, որոնցից Թեոփիլոս կայսրը (829-842 թթ.) պետք է հարսնացու ընտրեր: Երկար ընտրությունից հետո նա կանգ էր առել Թեոդորայի և բանաստեղծուհի Կասիայի վրա, սակայն ի վերջո ոսկե խնձորը տվել էր չքնաղ հայուհուն: Այդ դեպքից հետո վրդովված Կասիան գրել է իր հակահայկական էպիգրամները:

Թեոդորայի օրոք 842 թ. վերականգնվեց Բյուզանդիայում պատկերապաշտությունը: Նրա ջանքերով Բուլղարիայում 865 թ. քրիս-

տոնությունը հռչակվեց պետական կրոն: Իր եղբոր՝ Վարդաս Մամիկոնյանի ճնշման ներքո 856 թ. հրաժարվեց գահից և դարձավ միանձնուհի: Նա մահացել է վաղեմում 867 թ.:

Բյուզանդական կայսրության պատմության կարևորագույն էջերից է Մակեդոնական դինաստիայի կառավարման ժամանակաշրջանը (867-1056 թթ.), որը հայտնի է նաև որպես «Մակեդոնական վերածնունդ»՝ դարաշրջան, երբ այդ ժամանակ մեծ վերելք ապրեց բյուզանդական մշակույթը: Բյուզանդիայի պատմության մեջ Մակեդոնական դինաստիայի կառավարման ժամանակաշրջանը Հուստինիանոս I-ի (527-565 թթ.) կառավարման ժամանակաշրջանից հետո եղել է լավագույն շրջանը Բյուզանդիայի ողջ պատմության մեջ:

Ըստ ֆրանսիացի հայտնի բյուզանդագետ, Սորբոնի համալսարանի պրոֆեսոր Շառլ Դիլի այդ դինաստիան տվել է մի շարք աչքի ընկնող կայսրեր, որոնք «շնորհիվ իրենց գեղեցիկ հզոր ուժի, ճարպիկ և ճկուն դիվանագիտության ու կառավարման եռանդի, կարողացել են իրականացնել իրենց երազանքը՝ գահակալության այդ շրջանը դարձնել Բյուզանդիայի երկարատև պատմության ամենափայլուն շրջաններից մեկը»:

Մակեդոնական դինաստիայի հիմնադիր Վասիլ I-ի հայկական անունը Բարսեղ էր: Վասիլ I-ի ծննդավայրը հստակ հայտնի չէ: Ըստ ավանդական վարկածի՝ նա ծնվել է մոտ 811 թ. Ադրիանապոլսում կամ Խարիտապոլսում, հայկական աղքատ ընտանիքում, որն ապաստան էր գտել Մակեդոնիայում: Այդտեղից էլ ծագել է հետագայում նրա կողմից հիմնած արքայատան Մակեդոնական անվանումը: Պատմագրության մեջ այդ դինաստիան հիշատակվում է ինչպես նաև՝ Հայկական, քանի որ, ըստ արևմտաեվրոպական պատմաբանների՝ նրա կայսրերը, ռազմական գործիչները և բարձրաստիճան պաշտոնյաները ունեին հայկական ծագում:

Վասիլ I-ի նախնիների մասին տեղեկություններ է հաղորդում նրա թոռը՝ բյուզանդական կայսր Կոստանդին VII Օիրանածինը՝ «Թեոֆանեսի շարունակողները» ժամանակագրությունում: Ըստ այդ տեղեկությունների՝ Վասիլ I-ի նախնիները 5-րդ դարի երկրորդ կեսին Բյուզանդիա էին եկել Հայաստանից: Նրանք ծագումով եղել են Արշակունիների արքայատան ներկայացուցիչներ: Եվ դա է պատճառը, որ Վասիլ I-ի իրեն հետագայում հռչակեց Արշակունի: Իր մանկության մի մասը նա անց է կացրել գերության մեջ Բուլղարիայում, որտեղ տեղափոխվել էր նրա ընտանիքը 813 թ. բուլղարական խան Քրումի կողմից գերեվարվելուց հետո: Միայն 836 թ. նրան և մի քանիսին ի վերջո հաջողվում է դիմել փախուստի Թրակիա, որը պատկանում էր Բյուզանդիային, որտեղից էլ շուտով մեկնում է Կոստանդնուպոլիս և ծառայության անցնում Միքայել III կայսեր արքունիքում՝ որպես ձիապան, իսկ այնուհետև պարսկիմուսնուս (սենեկապետ): Հիանալի տիրապետելով ձիավարության արվեստին, լինելով ֆիզիկապես ուժեղ, գեղեցիկ և տղամարդ կարճ ժամանակամիջոցում Վասիլը դառնում է կայսր և պալատական տիկնանց ֆավորիտը: Իր սիրելիացի Միքայել III-ն առատորեն նվերներ է պարգևում և ամուսնացնում իր սիրուհու՝ Եվդոկի Բնգերինայի հետ:

Միքայել III-ը, ով աչքի էր ընկնում բարբերի շվայտությամբ, իրականում հեռու էր կանգնած պետական գործերից, և կառավարման ղեկն իր ձեռքն էր վերցրել մոր՝ կայսրուհի Թեոդորայի եղբայր Վարդ պատրիկը (Հայկազուն), ով եղել էր մանուկ կայսեր խնամակալը և արժանացել էր կեսարի տիտղոսի:

Վասիլի դեպի գահական իշխանություն տանող ճանապարհին, վճռորոշ քայլերից մեկը դարձավ հենց կայսեր մորեղբոր դեմ դավադրության կազմակերպումը՝ Միքայել III-ի համաձայնությամբ, ով չէր սիրում Վարդ պատրիկին: Վերջինս 866 թ. սպանվեց Թրակիայում մի խումբ դավադիրների ձեռքով, որոնց գլխավորում էր Վասիլը: Այդ դեպքից մեկ տարի անց նա դարձավ կայսեր կառավարչակից և սկսեց ազդեցիկ դիրք գրավել կայսրությունում, որը խիստ մտահոգության առարկա դարձավ կայսեր համար: Դա կանխատեսել էր նրա մայրը՝ Թեոդորան, ում դրդմամբ էլ Միքայելը փորձեց գաղտնի վերացնել իր մրցակից հակառակորդին, քանի որ նա ստվեր էր նետում իր վրա: Մակայն այդ մահափորձը ձախողվեց:

270

և 867 թ. սեպտեմբերյան մի գիշեր Միքայել III-ը գազանաբար սպանվեց սեփական ննջարանում՝ Վասիլի գլխավորած մի խումբ դավադիրների ձեռքով: Այդպես հայտնվեց մի նոր տիրակալ, իսկ նրա գահակալությունը՝ նոր դինաստիա՝ Մակեդոնական, որը գոյատևեց ավելի քան մեկուկես դար՝ 867-1056 թթ.:

Վասիլ I-ի օրոք (867-886 թթ.) Բյուզանդիայում հաստատվեց գահաժառանգության նոր կարգ, ըստ որի՝ միայն իշխող դինաստիայի անդամները կարող էին դառնալ կայսր: Այդ կարգը պահպանելու համար կայսրերն այսուհետ իրենց որդիներին պետք է պաշտոնապես հռչակեին կառավարչակիցներ: Նրա օրոք վերստին մշակվեց կայսր շուստինիանոս I-ի (527-565 թթ.) Օրենսգրքը, և 879 թ. հրատարակվեց «Առձեռն կանոնագիրքը»: Այդ ժամանակ ծավալվեց նաև շինարարական լայն գործունեություն, Կոստանդնուպոլիսն ավելի գեղեցիկ տեսք ընդունեց, կառուցվեցին նոր եկեղեցիներ, տաճարներ, աղբատների համար ապաստարաններ և այլն: Բյուզանդական տիրակալությունը հաստատվեց Միջերկրական և Սև ծովերի ավազանում: Ժամանակավորապես կայունացավ կայսրության արտաքին քաղաքական դրությունը: Կոստանդնուպոլսի 879 թ. եկեղեցական ժողովում հռչակվեց Արևելյան ուղղափառ եկեղեցու անկախությունը Հռոմի կաթոլիկ եկեղեցուց: Վասիլի I-ի մահից հետո (մահացել է դժբախտ պատահարի հետևանքով որսի ժամանակ 886 թ.) կրկին վերսկսվեցին արաբների և բուլղարների հարձակումները, որոնցից Բյուզանդիան արդեն 9-րդ դ. վերջին և 10-րդ դ. սկզբին սկսեց մի շարք պարտություններ, տարածքային կորուստներ կրել:

Վասիլ I-ից հետո հաջորդաբար գահ բարձրացան նրա որդիները՝ Լևոն VI (886-912 թթ.) և Ալեքսանդր (912-913 թթ.): Եթե վերջինս առավել հայտնի էր որպես հարբեցող, որն իր ժամանակն անց էր կանցնում ձիարշաժներում և զենության մեջ, ապա Լևոն VI-ն աչքի էր ընկնում իր կրթվածությամբ, որի համար ստացել էր «Բմաստուն», «Բմաստասե» պատվանունները: Նա բանաստեղծ էր, աստվածաբան, և պատահական չէ, որ նրա օրոք վերելք են ապրում բյուզանդական մշակույթը, բնական գիտությունները, ռազմական արվեստը: Ստեղծվում են գրականության և արվեստի բարձրարժեք գործեր:

Այդպիսի անհատականություն էր նաև Լևոն VI-ի և նրա կնոջ՝ Զոե կայսրուհու որդին՝ Կոստանդին VII Օիրանածին կայսրը, ով պատմաբան էր, բանաստեղծ, երաժիշտ, նկարիչ, ճարտարապետ, ինչպես նաև գիտության ու մշակույթի մեծ հովանավոր: Նրա մասին ստեղծվել է հարյուրաու գրականություն:

913 թ., երբ Կոստանդինը 8 տարեկան էր, հռչակվում է բյուզանդական կայսր, բայց քանի որ անչափահաս էր, ուստի երկրի կառավարումը հանձնվեց նրա խնամակալին՝ Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկողայոս I Միստիկին: Հետագայում նրա խնամակալը դարձավ նաև ծագումով հայ ծովակալ Ռոմանոս I-ին՝ Լալկարենսը՝ Կոստանդին VII-ի կնոջ՝ Հելենի հայրը, ով ստանձնեց նաև կայսրության կառավարման գործը (920-944 թթ.): Սակայն վերջինիս որդիները, գահընկեց անելով իրենց հորը, աքսորեցին նրան վանք և սկսեցին ինքնուրույն կառավարել երկիրը, որը դժգոհության մեծ ալիք բարձրացրեց մայրաքաղաքում և Կոստանդին VII-ը, որը միայն ավանդաբան էր կառավարում երկիրը 913 թ.-ից սկսած մինչև 920 թ., վերադարձնելով արքունիք (մինչ այդ նա զբաղվում էր գրական գործունեությամբ և իրեն շրջապատել էր կրթված մարդկանցով), չէր հետևում պետական գործերին: Աքսորելով Ռոմանոս I-ի որդիներին՝ նա ինքնուրույն սկսեց կառավարել իր տերությունը 945-959 թթ.: Նրա օրոք բյուզանդական գործերը մի շարք հաղթանակներ տարան արաբների և բուլղարների նկատմամբ:

Կոստանդին VII-ը մի շարք երկերի հեղինակ է՝ «Բյուզանդական արքունիքի արարողությունների մասին», «Կայսրության կառավարման մասին», որի 43-46 գլուխները վերաբերում են Հայաստանին: Նա ամսանակցել է «Վասիլիկա» օրենսգրքի ստեղծմանը և այլն:

959 թ. Կոստանդին VII-ը դարձավ դավադրության զոհ, որի կազմակերպիչը նրա հարազատ որդին էր՝ Ռոմանոս II Կրտսերը, ով, թունավորելով հորը, գրավեց գահը, բայց և ինքը 963 թ. դարձավ մի այլ դավադրության զոհ, որի կազմակերպիչը կինն էր՝ Թեոֆանոս կայսրուհին: Դեռևս Ռոմանոս II-ի կենդանության օրոք վերջինս սիրահարվել էր հայազգի Վարդ պատրիկի որդուն՝ Նիկեփորոսին: Սպանելով ամուսնուն՝ Թեոֆանոս երկրորդ անգամ ամուսնացավ Նիկեփորոսի հետ՝ դարձնելով նրան կայսր, ով հայտնի է որպես Նիկեփորոս II Փոկաս (963-969 թթ.):

Ասվում է, որ բյուզանդական կայսրուհիների շարքում Թեոֆանոս

իր գեղեցկությամբ և խելքով մրցում էր միայն Հուստինիանոս I-ի կնոջ՝ Թեոդորայի փառքի հետ: Լինելով փառասեր, նեղ անձնավորություն՝ որոշ ժամանակ անց նա կազմակերպում է նաև Նիկեփորոս II-ի սպանությունը, քանի որ դարձել էր վերջինիս քրոջ որդու՝ Հովհաննես Չմշկիկի սիրուհին: Այսպես արդեն երրորդ անգամ ամուսնանալով վերջինիս հետ՝ 969 թ. դարձավ Թեոֆանոսի օգնությամբ բյուզանդական գահին է բազմում Հովհաննես I Չմշկիկ կայսրը, ով կառավարել է մինչև 976 թ.: Թեոֆանոս վերջինիս օրոք, որ անողոր էր ոչ միայն իր հակառակորդների, այլև ազգականների նկատմամբ, ովքեր ինչ-որ կերպ կարող էին խանգարել իր փառասիրական պլաններին՝ որպես միանձնուհի աքսորվեց մայրաքաղաքից Փոքր Ասիա: Եվ միայն հետագայում նրան թույլատրեցին վերադառնալ կայսերական պալատ՝ պայմանով, որ նա ոչ մի առնչություն չունենա պետական գործերի հետ:

Հովհաննես I Չմշկիկ կայսրը, ով հայկական աղբյուրներում հիշատակվում է Կյուռ ժան, հմուտ զորավար էր, և նրան հաճախ համեմատում են Ալեքսանդր Մակեդոնացու հետ: Նա հաղթել է արաբներին, Ռուսիայի իշխան Սվյատոսլավ Իգորևիչին, գերել է բուլղարական թագավոր Բորիսին: Նվաճել է բազմաթիվ տարածքներ, փորձել է անգամ գրավել Հայաստանը, բայց հանդիպելով մեծ դիմադրության՝ հաշտություն է կնքել Աշոտ III Ողորմած արքայի հետ:

Նա նաև ուներ շատ թշնամիներ արքունիքում, որոնք դժգոհ էին նրա քաղաքականությունից, բայց կայսրը կարողանում էր որոշ ժամանակով հմտորեն խուսանալ վիրկելով իրեն և գահը: Սակայն նրա համար ճակատագրական եղավ արաբների դեմ արշավանքը 976 թ., որից վերադառնալիս մահացավ: Այդ ժամանակ սկսվեցին համառորեն լուրեր տարածվել, թե կայսրին թունավորել են:

976 թ. բյուզանդական կայսր է հռչակվում Մակեդոնական դինաստիայի առավել հայտնի ներկայացուցիչներից՝ Վասիլ II-ը, որի օրոք (մինչև 1025 թ.) կայսրության սահմաններն ընդարձակվեցին: Նա Ռոմանոս II Կրտսերի որդին էր: Ըստ հայկական ավանդության՝ իր եղբոր՝ Կոստանդինի հետ նրան Թեոֆանոս կայսրուհու ոսնձգություններից հեռու պահելու համար, Հովհաննես Չմշկիկ կայսրը կողմից փախցրել էին Հայաստանի Անձիտ գավառի Վասակալան գյուղ և միայն 957 թ. նրանց հետ է բերել Կոստանդնուպոլիս, երբ Թեոֆանոս աքսորված էր մայրաքաղաքից:

Շուրջ 40 տարի ընդմիջումներով Վասիլ II-ը պատերազմ էր վարում բուլղարների դեմ: Ի վերջո 1018 թ. նրան հաջողվում է նվաճել Բուլղարական թագավորությունը և վերածել այն բյուզանդական նահանգի: Վասիլ II-ի կարգադրությամբ շուրջ 15 հազար բուլղար ռազմագերիներ կուրացվեցին, որի համար էլ նա կոչվեց «Բուլղարասպան»: Լինելով դաժան, միաժամանակ եռանդուն գործիչ՝ նա կարողացավ իրեն ենթարկել Բալկանյան ողջ թերակղզին, ճնշել մի շարք խռովություններ և ապստամբություններ 976 և 987 թթ.: Նրան հաջողվեց նաև կանխել ռուսների գրոհը Կոստանդնուպոլսի վրա: Բանն այն է, որ այդ ժամանակ սրվել էին հարաբերությունները Կիևյան Ռուսիայի հետ: Դեռևս 9-րդ դ. սկսած ռուսները բազմաթիվ արշավանքներ էին ձեռնարկում Բյուզանդիայի դեմ, որոնց մի քանի անգամ հաջողվեց պաշարել մայրաքաղաք Ցարգրադը, բայց այն գրավել չհաջողվեց: 989 թ. ռուս-բյուզանդական պատերազմի ժամանակ ռուսները մեծ իշխան Վլադիմիր Սվյատոսլավիչի գլխավորությամբ գանդեցին Դրիմուս հունական Խերսոն քաղաքը և պատրաստվում էին կրկին գրոհել Կոստանդնուպոլսի վրա: Վլադիմիրը, որպեսզի չիրագործի իր այդ ծրագիրը, պահանջեց Վասիլ II-ից կնության տալ 25-ամյա քրոջը՝ Մանային, ով աչքի էր ընկնում իր գեղեցկությամբ ու խելքով: Վասիլը տվեց իր համաձայնությունը, բայց Մանան ընդդիմացավ պահանջելով, որպեսզի ռուս հեթանոս իշխանը հրաժարվի իր դավանանքից և ընդունի քրիստոնեություն: Վլադիմիրը համաձայնվեց: Նրանց ամուսնությունը տեղի ունեցավ 988 թ. Խերսոնոսում, և նույն թվականին էլ Կիևյան Ռուսիան ընդունեց քրիստոնեությունը՝ պետական կրոն:

Մեծ է եղել Մանայի դերը Ռուսիայում քրիստոնեության տարածման գործում, ով աչքի է ընկել նաև եկեղեցաշինությամբ, և դա է պատճառ, որ իր ամուսնու, ինչպես նաև իրենց 2 զավակների՝ Բորիսի և Գլեբի հետ միասին, որոնք ևս կարևոր դերակատարություն են ունեցել Ռուսիայում քրիստոնեության տարածման գործում, ռուս ուղղափառ եկեղեցու կողմից դասվեցին սրբերի շարքը: Մանան մահացել է 48 տարեկան հասակում համաճարակից:

Վասիլ II-ի օրոք Բյուզանդիայում տեղի ունեցան նաև բնական աղետներ՝ երկրաշարժեր, որոնք մեծ Ֆասաներ պատճառեցին կայսրությանը: Այդ ժամանակ փլուզվեց դեռևս Հուստինիանոս I-ի

280

օրոք կառուցված Մուրբ Մոֆիայի հռչակավոր տաճարի գմբեթը, և Վասիլ II-ի հրավերով 989 թ. մայրաքաղաք ժամանեց հայ մեծ ճարտարապետ Տրդատը, ով էլ վերակառուցեց այն 1001 թ., որը կանգուն է առ այսօր:

Վասիլ II-ի մահից հետո բյուզանդական գահին է բազմում նրա եղբայրը Կոստանդին VIII-ը, ով երկար ժամանակ եղել է կայսեր կառավարչակիցը և փաստացի գահակալել է 1025-28 թթ., ով սակայն նշականալից հետք չի թողել Բյուզանդիայի պատմության մեջ: Նա ուներ 2 դուստր՝ Զոեն և Թեոդորան: Արու գավակ չունենալով նրանցով, ըստ էության, ավարտվում է Մակեդոնական դինաստիայի հայկական արական ճյուղը: Զոեն մի քանի անգամ ամուսնացել էր, և նրա շնորհիվ իր ամուսինները դարձել էին կայսրեր: Այսպես ամուսնանալով 60-ամյա Ռոմանոս III Արգիրոսի հետ, ով, դառնալով կայսր, գահակալել է 1028-1034 թթ., նրան խեղդամահ անելուց հետո Զոեն դարձել էր ապագա կայսրեր արքունի սենեկապետի եղբոր՝ Միքայել IV Պափագոնացու (1034-1041 թթ.) կինը, իսկ նրա մահից հետո Միքայել V-ի (1041-1042 թթ.) կինը, ով արգելափակել էր նրան վանքում, սակայն ապստամբների պահանջով ազատ է արձակվել, իսկ կայսրը փախուստի դիմել: Զոեն 1042 թ. ժողովրդի հավանությամբ ամուսնացավ նաև Կոստանդին IX Մոմոմաքոսի հետ (1042-1055 թթ.): 1028-1050 թթ. Զոեն եղել է կայսր կառավարչակից, իսկ 1042 թ. կայսրուհի (ապրիլ-հունիս): Նա ևս դասվել է հունական եկեղեցու սրբերի շարքը:

Մակեդոնական դինաստիայի վերջին ներկայացուցիչը հանդիսացավ Թեոդորա կայսրուհին (1055-1056 թթ.): Մինչ այդ 1028-1030 թթ. նա եղել է կառավարչակից և երկար ժամանակ հալածվել է քրոջ Զոեի կողմից, արքայի վերադարձից հետո, դարձել միանձնուհի և միայն 1055 թ. հետ է վերադարձել և հռչակվել կայսրուհի:

Բյուզանդիայի հայազգի կայսրերի և կայսրուհիների գործունեությունը գնահատելիս, անշուշտ, պետք է որպես չափանիշ ընդունել այն հանգամանքը, թե նրանք որքանով են կապված եղել իրենց նախնիների երկրին և օգտակար եղել իրենց ժողովրդին: Եթե այս տեսանկյունից ենք մոտենում հարցին, ապա պետք է նշել, որ նրանցից ոչ բոլորն են դրական դերակատարում ունեցել և անգամ ինչ-ինչ պատճառներով թաքցրել են իրենց հայկական ծագումը: Սակայն եղել են նաև գահակալներ, ովքեր չեն թաքցրել իրենց ծագումը: Օրինակ Վասիլ I-ը բարեկամական սերտ հարաբերություններ է հաստատել հայոց Աշոտ I Բագրատունի արքայի հետ, ճանաչել է հայ Բագրատունիներին թագավորությունը: Ըստ բրիտանացի գրող և պատմաբան Զոն Նորվիչի՝ նրա հարազատ լեզուն եղել է հայերենը: Մեկ այլ կայսր Կոստանդին VII Օիրանածինը պարծեցել է իր հայկական արմատներով, տիրապետել է նաև հայերենին: Կոստանդինուպոլիս հրավիրելով հայոց արքա Աշոտ II Երկաթին և Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսին՝ հայոց արքային տրամադրել է օգնական զորք և աջակցել նրան Ատրապատականի

ամիրա Յուսուֆի դեմ պայքարում: Նա իրեն շրջապատել է հայազգի նշանավոր զորավարներով, ինչպիսիք էին Բագրատունյե, Մելիասը, Սլեբը, Վարդասը, Լևոն և Նիկեփորոս Փոկասները, Հովհաննես և Թեոփիլոս Կուրկուսանները և այլք: Կոստանդինը ձգտել է նաև ամրապնդել Բյուզանդիայի դիրքերը Հայաստանում:

Ինչպես նշվեց, Թեոդորայի գահակալությամբ ավարտվում է Մակեդոնական դինաստիայի հայկական արական ճյուղը, և դրանից հետո բյուզանդական գահին բազմեցին մի շարք միապետներ. Միքայել VI (1056-1057 թթ.), Բասիակ I Կոմենենոս (1057-1059 թթ.), Կոստանդին Դուկաս (1059-1067 թթ.), Եվդոկիա (1067-1071 թթ.), Ռոմանոս IV (1068-1071 թթ.), Միքայել VII Դուկաս (1071-1078 թթ.), Նիկեփորոս III Բոտանիատես (1078-1081 թթ.), ովքեր, թեև չունեին հայկական ծագում, որևէ ազգակցական կապ Մակեդոնական դինաստիայի հայազգի ներկայացուցիչների հետ, բայցնայնպես որոշ պատմաբան բյուզանդագետների կողմից, ինչպիսիք են Շառլ Դիլը, Ալեքսանդր Վասիլը և ուրիշներ, դասվեցին այդ դինաստիային պատկանող գահակալների շարքին: Եվ դա է պատճառը, որ այդ դինաստիայի գոյատևման ժամանակշրջանի ավարտը, վերջիններիս կողմից, հասցվում է մինչև 1081 թ., սակայն պատմագրության մեջ դինաստիայի ավարտը առավելապես ընդունված է համարել 1056 թվականը:

Գրականություն

1. Կարապետ Տեր-Սահակյան, Հայ կայսրեր Բյուզանդիոնի հատոր Ա-Բ, Վենետիկ 1905:
2. Թեոփանեսի շարունակողները, Եր., 1990:
3. «Օտար աղբյուրները Հայաստանի և հայկականի մասին. Բյուզանդական աղբյուրներ», Գ. Հովհաննես Սլիկիցես, Եր., 1979:
4. Диль Шарль. Расцвет империи при Македонской династии 867-1081//История Византийской империи. М., 1948.
5. Диль Шарль. Византийские портреты. М., 1994.
6. Михаил Пселл. Хронография. Краткая история. М., 1978.
7. Васильев А. А. Эпоха Македонской династии (867-1081)//История Византийской империи. т. 1, СПб, 1998.
8. Успенский Ф. И. История Византийской империи: В 5-и т., т. 3. М., 2005.
9. Норвич Джон. История Византии. М., 2010.
10. Дашков С. Б. Императоры Византии. М., 1997.
11. Левченко М. В. История Византии. М.-Л., 1940.
12. Скажин С. Д. История Византии. В 3-х т., Т. 2. М., 1967.
13. Рыжов К. В. Все монархи мира. Древняя Греция. Древний Рим. Византия. М., 2001.
14. Тер-Газарян Р. В. Армяне на Византийском престоле. М., 1999.
15. John H. Rosser. Historical Dictionary of Byzantium. (2nd edit.) Scarecrow Press, 2011.

Վաչագան ԽԱՄՎԿՅԱՆ
պ.գ.թ. դոցենտ


Գլխատվելուց առաջ ինչ ասաց հայ առաջնորդը Աթաթուրքին

Թուրքիայում կան թեմաներ, որոնց վերաբերյալ կան չբարձրաձայնելու մասին չգրված օրենքներ: Այդ թեմաներից են Թուրքիայում 1937-1938 թվականների Դերսիմի կոտորածին վերաբերվող շատ մանրամասներ:

NEWS.am-ն այս անգամ ներկայացնում է Դերսիմի կոտորածի ժամանակ ժողովրդի պաշտպանությունը կազմակերպած Մեյիթ Ռեզայի եւ Աթաթուրքի միջեւ գաղտնի խոսակցությունը, որի մասին բարձրաձայնել է թուրքական Yeni Safak պարբերականը ներկայացնելով այդ ամենը ապացուցող Թուրքիայի ազգային հետախուզության ծառայության փաստաթուղթը:

Ըստ այդ փաստաթղթի, թուրքական դատարանի կողմից Դերսիմի ապստամբության առաջնորդ Մեյիթ Ռեզայի դեմ մահապատժի որոշում կայացնելուց հետո Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքը նրա հետ գաղտնի հանդիպում է անցկացրել:

Հանդիպման ժամանակ Թուրքիայի այն ժամանակվա նախագահ Աթաթուրքը Մեյիթ Ռեզային ասել է, որ եթե նա ասի, որ փոշմանել է եւ ներում հայցի, մահապատժի չեն



իրականացնի: Մեյիթ Ռեզան պատասխանել է, որ ինքը այնպիսի բան չի արել, որ փոշմանի կամ ներում հայցի, քանի որ ընդամենը փորձել է պաշտպանել իրենց կյանքը, հողերն ու տները:

Մեյիթ Ռեզան Աթաթուրքին հիշեցրել է, որ իրեն խաբելով են ձերբակալել: Նա նշել, որ երբ կանչել էին իր Աթաթուրքի հետ խաղաղության համար բանակցելու, ինքն իր կամքով եկել է, սակայն նահանգապետը ձերբակալել է: «Այսքանից հետո ձեզ ինչպես վստահեմ: Ես իմ արած որևէ բանի համար չեմ փոշմանել ու ներում էլ չեմ հայցելու, սա իմ վերջին խոսքերն են», – ասել է Մեյիթ Ռեզան:

Աթաթուրքն այս խոսքերից կատաղել է՝ հրահանգելով տանել կախաղան բարձրացնելու Ռեզային: «Ես գնում եմ մահվան: Թող դա իմ դարդ լինի, իսկ որ ես չխոնարհվեցի ձեր առաջ, թող դա էլ ձեզ համար դարդ լինի», – ասել է Մեյիթ Ռեզան:

Նշենք, որ Մեյիթ Ռեզան ծնվել է Դերսիմի գյուղերից մեկում, հանդիսացել է ալեյի-զազա ցեղերից մեկի առաջնորդը, գլխավորել թուրքական պետության դեմ ապստամբությունները: Թուրքական մամուլում բազմաթիվ վկայություններ կան, որ նա հայ է եղել: Նրա վրանից խուզարկության ժամանակ հայտնաբերել են հայերեն գրություններով խաչեր եւ հայերենով գիրք:

Դերսիմի ապստամբությունը թուրքական իշխանությունները արյան մեջ են խեղդել վերացնելով հազարավոր գյուղեր: Տարբեր աղբյուրների հաղորդմամբ Դերսիմի կոտորածների զոհ է գնացել մինչև 100 հազար հոգի:

1915-ի Հայոց ցեղասպանությունից փրկված, եւ Դերսիմի տարբեր գյուղերում պատրաստված հազարավոր հայերը 1938-ին կրկնակի ցեղասպանության ենթարկվեցին:

ՆՄԱՆԸ ԶԿԱ

Յրաջա Մաթեոսյանի հիշատակին

Որքան գիտեմ, Գյոթեն ոչ միայն մեծ գրող էր, այլև ժամանակի գրական մեծագույն դիկտատոր: Միջնադարի մոռացումից նա փրկեց ու արժանին մատուցեց Վիլյամ Շեքսպիրին: Բավական է, որ Գյոթենն մի գրողի մասին դավատանքի խոսք ասեր, եւ նա կդառնար հույժ համբավվոր: Հայ իրականության մեջ նման շնորհ եւ վերագրում էի Հրանտ Մաթեոսյանին: Պատահական չէ, որ գրածս առաջին իսկ պատմվածքից հետո բախեցի մեծ գրողի դուռը: Իմ միամիտ գլուխը կարծում էր, որ նրա հեղինակավոր կարծիքը լինելու էր այն տանող իրթիոր, որն ինձ կտրելու էր ճղճիմ գոյությունից բարձրացնելով գրական անդաստան: Ավաղ: Մեծ գրողն ինձ մեծի տեղ չդրեց: Դեռ ավելին իմ վայրի գրելաձոր եւ անսյուժե պատումը ոչ մի կերպ չտեղավորվեցին Հրանտ Մաթեոսյանի գեղարվեստական պատկերացումներում: Ինձ բան չէր ասում, բայց ես շատ բան էի հասկանում... Եվ եթե իմ պնդածականությունը չլիներ, անշուշտ, ես կդադարեցնեի գրական փորձությունս: Հրանտ Մաթեոսյանի իսկ բնակարանում ես կորցրի երազանքիս մեծագույն հովանավորին, բայցեւ ձեռք բերեցի մեծ բարեկամի: Նա այնքան էլ հեռու չէր, Հրանտի կողքին էր Հրաչյա Մաթեոսյանը, որն իր ախպոր մոտ նստած՝ լռեցու միամիտ ու պայծառ ժպիտով հարց էր տալիս:

– Լեւոն, դու ինչի համար ես գրում...

Էն ժամանակ էսքան խելոք չէի, որ մի հնարամիտ պատասխան տալի: Բայց, իսկապես, ինչու էի գրում... Երեւի ես էլ էի ուզում մեծ լինել... Իսկ մեր գեղում ասում էին՝ վեճեր գոմշի թրիքն ա... Իսկ Հրաչիկն ասում էր.

– Հա... երեւի մտածում ես՝ էդ ո՞նց ա ահնիձորցին կգրի շնողնեցին չի գրի...

Ճիշտն ասած ես էդ մասին չէի մտածել: Որ էդպես կարծես է թումանյանի ու Մաթեոսյանի նման գրող պետք է որ Երեւանն էլ տված լիներ: Բայց չէր տվել: Որովհետեւ գրողի գրական ճակատագիրը ծննդավայրի մեծությամբ չէ պայմանավորված: Հիմի որ հաստատ գիտեմ. մեծ գրող լինելու համար պարտադիր չէ, որ մեծ գլուխ ունենաս, մեծ սիրտն էլ բավական է: Մաթեոսյանները Հրանտը, Հրաչը, Համոն, Լոռուց էին Ահնիձորից, Բզնաստ հորից եւ Արուստից... Վիլյամ Մաթեոսյանն աշխարհի էն ծերից եկել-հասել էր Լոռվա կորած-մոլորած Ահնիձոր գյուղ, որ տեսնի, թե էդ ինչ բնություն է Մաթեոսյան ծնել:

Խորովածի սեղանին Մարոյանի պատկառելի տեսքը, սպիտակ պիջակն ու սպիտակ տաբատը գրավել էին օջախի հոր Բզնաստի ուշադրությունը: Կողքին նստած Դազինյան Բաֆոյի բզել է, թե

– Աղա, էն ո՞վ ա էն շաքիկ-փոխանով մարդը...

Մինչդեռ էդ «շաքիկ-փոխանով» մարդն իր կենացն էր խմում: Ասում էր.

– Շնորհակալ եմ, որ Մաթեոսյան ծնացար...

Բզնաստն էլ զարմացած, թե՛

– Այտա, մերն ի՞նչ բանի էր, որ ես ծնեի... Էդպես է Լոռվա աշխարհը: Էնտեղ մայրն է ծնում, մայր բնությունը... Մաթեոսյաններինց միայն Հրաչին մոտ եղա... Հրանտն իր տաղանդով, մեծությամբ էր ինձնից հեռու, Համոն տարածությամբ: Հրաչը, չնայած իր



մեծ եղբոր քմահաճ վերաբերմունքին, ինձ ընդունեց, փայփայեց ու պաշտպանեց իր պուճուր եղբոր պես: Նույնիսկ մի անգամ, երբ «Գարուն» ամսագրի սուտիկներն ինձ սին խոստովեցնելով տանում-բերում էին, չհամբերեց ու երեսներին շապացրեց.

– Ինչ ա, Լեւոն Զավախյանը ձեր խաբելածողի կն ա...

Ոսիցգլուխ լռեցի էր Հրաչիկը: Ներքծված լռեցու շիտակությամբ, միամտությամբ, իմաստությամբ եւ հատկապես հումորով: Նրա բարկությունն էլ էր հումոր, ուրախությունն էլ, խրատն էլ: Նրա տարիքը, թոթովախոս, ծանր ու մեծ խոսքը, գեղջկական կոլորիտը, ճակատախառը փայլատակուժները, դիմք դեմքն ու մարգարեական կանխատեսումներն ինձ միշտ Կոտակարանի Սիմոն ծերունուն էին հիշեցնում: Ինքն աշխատում էր «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթում: Իր աշխատասենյակում մենք բազմիցս էինք հանդիպում: Էն ժամանակ ես էպես չէի, քիչ գիտեի շատ խոսում էի: Ես խոսում էի ինքը լսում էր, լսում էր լռեցու ծով համբերությամբ: Դե, մի քիչ էլ ես էի լռեցի, մի քիչ էլ շաշ... Քիչը ո՞րն է, մեր գեղի լիզվով ասած սելով շաշ... Պատկերացում էր, մի սալ լիք շաշություն... (ինչքան չլինի, մեջս ըրիցեցու արուն կա): Էդ շաշությունն էր Հրաչիկին դուր գալիս, երբեմն էլ համբերությունից հանում: Ասեմք, երբ գրուցակիցը Բագրատ Ուլուբաբյանի նման մեկն էր լինում.

– Լեւոն, – ասում էր, – երբ Բագրատ Ուլուբաբյանն ա խոսում, դու պիտի լռես... Ա շաշ, – ասում էր ներողամտաբար, – մեծին լսել ա պետք:

Ես մեծ չէի, բայց մեծավարի խոսում էի, ես տեր վրազն էի, ես չէի համբերում մեծանամ, ես տգետ էի եւ ամբարշտվան, ու ասել մեր գեղացի Պուրի Մաղոն՝ ես էլ ինձ ու գյուրա մարդ էի: Այնուամենայնիվ, Հրաչն ինձ կասեցնելու ձեռք գտել էր: Մեր ընկերներից օդորմածիկ Ալեքսանդր Իսկանդարյանի տանը հյուր էինք: Ոչ թողում էի ուտեն, ոչ էլ խմեն, երկար-բարակ ու, որ կարելու է, անհատ խոսում էի: Ընդհանրապես, ով էլ բերանը բաց անի խելքը երեւում է... Ա յ, էդ չէր Հրաչիկի դուրը գալիս: Մեծ էլ բերան ունեի, էնպես որ, աղամանը բերանումս բարեհաջող տեղավորվեց... Հրաչիկն էր, էլի, որ տեսավ ինձ լեցնելու հնար չկա, աղամանը բասկետբոլի գնդակի պես գցեց բերանս. Ասավ.

– Մրանից եղին էլ անհամ չես խոսա...

Իսկապես: Էդ մի պտուղնեց աղը (ես պտուղունց ասեմ՝ դուք աղաման հասկացեք) համ տվեց... Հիմա ոչ անհամ խոսում եմ,

ոչ էլ, առավել եւս՝ անհամ գրում: Վկան՝ Արթուր Անդրանիկյանը: Էս վերջերս մատկաբաշ հացի վրա մի տոպրակ աղ դրած՝ եկավ Վերնիսաժ, աղն ու հացն ինձ մեկնեց, ասաց.

– Դու ես այսօրվա հայ գրականության աղն ու հացը...


Օղորմի քեզ, Հրաչիկ, աղդ ինձ հացի արժանացրեց, եթե հավատանք Արթուրի կատակաբանությանը: Իսկ ինչու չհավատամ... Կյանքն ինքնըստինքյան սուտ է: Մնում է մի սուտ էլ ես հնարեմ ու մտնեմ մեջը, երջանիկ ապրեմ: Ո՞վ է ինձ բռնողը... Երբ աշխատում էի լուսավորության նախարարությունում, շատ էի շրջագայում Հայաստանի շրջաններով: Էն ժամանակ պաշտոնյաները հիմաականում կաշառակեր էին: Մեր մինիստրությունում կաշառք չկար: Մերը կերակրման սիստեմ էր: Երբ որեւէ տեղ ուսումնասիրությունների էինք գնում, իմացեք, որ էդ շրջանի բոլոր ռեստորանները մերն էին: Հիշում եմ, Մեւանի ավազանում գնացել էինք տեչպական ստուգումների: Էնքան էի կերել, որ կերկոխ էի եղել: Ճրնշումս հասել էր հազարի, այքերս մթնում էին, գլուխս պտտվում, սիրտս խառնում... Յոթերորդ ռեստորանից հետո ես մածուն էի ուտում, մերոնք՝ խորոված, չհաշված քյուֆթեն, իշխանն ու կողակը... Դե, նրանք պարապած էին:

Մեզ ամենից վատ կերակրում էին Լոռվա ձորում: Եվ ոչ այն բանի համար, որ ժլատ էին:

Պարզապես աղքատ էին: Մինչդեռ, ամենամեծ հարստությունը Լոռում էր: Աստված տվել ու չէր խնայել... Լոռեցուն խոսք էր տվել: Աստվածային մի գանձ, որ ոչ նեխում է, ոչ հնանում, ոչ սպառվում, ոչ էլ կորչում, մոտավորապես ըստ Կոտակարանի, որտեղ ասվում է Ձեր գանձերը պահեք երկնքում: Պարզվում է, որ երկրում էլ անթափանց գանձեր կան: Էդ խոսքը գալիս էր գլգլան աղբյուրներից, կապույտ լեռներից, թավշոտ լանջերից, բարձր սարերից, խորը ձորից, գիծ Դեբեդից, խիտ ծմակներից, նախախտ բլուրներից, պղնձագույն ժայռերից, ծաղկուն հովիտներից... Եվ այդ բնության մեջ գերբնական միասնական: Եթե չլիներ էդ աշխարհը, որտեղից էլին գալու Հրանտ Մաթեոսյանը, Հրաչյա Մաթեոսյանը, Համո Մաթեոսյանը... Մեր գրարվեստը մեր աղբյուրների նման պարզ է ու գուլալ: Մեր աստվածները մեր ակունքն են իմաստություն...

Հրաչյա Մաթեոսյանի կերպարը կլիներ կիսատ, եթե նա դրախտի այգում հանդիպած չլիներ իր մյուս կեսին Հայկանուշ Պապյանին Հայկանուշին... անուշ... նուշ... Էդ քաղցր ու քնքուշ քույրիկին: Նրա ակունքն էլ բարձր լեռներեն էր, գմբուխտ դաշտերեն, կապույտ երկնքեն, շնկշնկան հովերեն... որ իր եղբոր աղջկա Հասմիկ Պապյանի շուրթին երգ է դարձել, ոգեղեն գանձ, գմալ մեղեդի, հոգու աղոթք, արյան կանչ... Հենց այնպես ոչինչ չի լինում: Մի անգամ չէ, որ Հայկանուշի դրոմամբ, միայն թեանցուկ, ամուսիններով Վերնիսաժ ինձ այցի էին գալիս. այցի էին գալիս պուճուր գրողին տեսնելու, որին սիրում էին մեծ գրողի չափ... Հիմա ես նրանց սերն ինչպե՞ս փոխադարձեմ... Մի տարի էլ չի անցել, գնացին, երկու աղափառ պես թեւ առան թռան եւ աշխարհից... Աստծո կապույտ աչքի մեջ երկու լույս է ճառագում՝

Գիրքը, որ 7 տարի ապրեց ջրի տակ



Դժվար է ասել՝ Սուրբ Գրքի հանդեպ մեր առանձնակի վերաբերմունք է պատճառը, թե հրաշագործ գործությունների նկատմամբ մշտական նախապաշարմունքը, սակայն այլ կերպ չես բացատրի այն ակնածալի երկյուղածությունը, որով մարդիկ հարաբերվում են Մատենադարանում պահվող առեղծվածային մի ավետարանի հետ: Եվ նույնիսկ այն դեպքում, երբ ձեռագիր մատյանն այժմ այցելություններին հասանելի է միայն ապակու հետևից, մարդիկ շարունակում են նրանից հրաշք ակնկալել, առիթը բաց չեն թողնում որևէ հարցով դիմել ավետարանին. չէ որ այն անվանվում է նաև «Խնդրակատար» խնդրանք կատարող: Կամ, գուցե, առեղծվածային գրքի նկատմամբ հավատը գործել է նաև այն պարզ պատճառով, որ ավետարանն ի նքն էլ փրկվել է հրաշքով: Այլ կերպ դժվար է անվանել նրա անցած ուղու զարմանալի պատմությունն ու երկրորդ «հայտնությունը»:

Իսկ այս պատմությունը սկիզբ է առնում 1498 թվականից, երբ Վասպուրականի Քաջբերունիք գավառի Ասպիսնակ գյուղում Թուրվանդա անունով մի իշխան Տեր Բարսեղ քահանային պատվիրեց ընդօրինակել Ավետարանը: Այն ժամանակ դժվար էր նույնիսկ կրահելը, որ հետագայում վանեցիները պիտի այդքան կապվեին ձեռագրի հետ, և երբ 17-րդ դարում Շահ-Աբաս 5-րդ արքան հայերին տեղահան էր անում, վերջիններս այն իրենց հետ տեղափոխեցին Պարսկաստան: Հայտնի է, որ Փերիայում Իրանի ամենահայաբնակ գավառներից մեկում, ապրել է Տեր Գրիգորը, ով հետագայում իր ձեռքով Ավետարանը տեղափոխել է նահանգի գյուղերից մեկը՝ Շուրիշկան. այստեղից էլ ավետարանի ներկայիս անվանումը: Պատմում են, որ Տեր Գրիգորը Սուրբ Գիրքը հսկել է աչքի լույսի պես, նրա հետ գաղթի երկար ճանապարհ է անցել: Քահանան այնքան հնարամիտ է գտնվել, որ գիրքը կապել է իր մեջքին՝ այժի մորթուց պատրաստված տիկի մեջ՝ պահպանելով վտանգներից ու ամեն կարգի արտաքին ներգործություններից:

Սակայն կորստի վտանգը դեռ կար, և Շուրիշկանում վանեցիները որոշում են թաքցնել ավետարանը: Նրանք հարմար մի վայր են

ընտրում Սուրբ Բարսեղ Կեսարացու վանքի տարածքում, գիրքը թաղում են հողում, ապա վրան ուռենու շիվ են տնկում՝ իբրև նշան, որպեսզի տեղը չկորցնեն: Հետո պիտի գործվեին յոթ երկար ու ձիգ տարիներ: Ուռենին հասակ էր առել, փարթամ սաղարթ էր կապել՝ դառնալով ավետարանի փրկության խորհրդանշը: Իսկ այնտեղ, որտեղ թաղված է եղել գիրքը, նաև աղբյուր էր գոյացել, որի բուժիչ ջրերի մասին լեգենդներ էին պատմում: Ահա այսպես, յոթ տարի շարունակ ձեռագիրը մաացել էր ուռենու արմատների տակ, աղբյուրից անդադար բխող ջրերի մեջ՝ վստահված միայն ճակատագրի կամքին ...

Եվ որքան մեծ էր նրանց զարմանքը, ում վիճակվել էր տարիներ անց կրկին լույս աշխարհ դուրս բերել ձեռագիր մատյանը, երբ տեսել էին, որ գիրքը մաացել էր անփաս: Ո՛չ ջուրը, ո՛չ հողը, ո՛չ ժամանակը ի գործ չէին եղել իրենց հետքը թողնել նրա վրա: Ավետարանի 322 թերթից միայն առաջին երեք էջերն էին թեթևակի ժառավել: Բայց առաջվանն էին անկրկնելի մանրանկարները, կիսախորան-անվանաթերթերը և լուսանցքազարդերը: Նույն էր կաշեպատ կազմը՝ պատված արծաթե բարձրաքանդակ ականա-կուռ կրկնակազմով, զարդարված թանկարժեք քարերով (ըստ ավանդույթի, դրանք մի պարսիկ փաշայի նվիրատվությունն էին իր որդուն Ավետարանի միջոցով բուժելու համար): Պատմությանը այսպիսի քանի՜ դեպք է հայտնի, երբ որևէ գիրք տարիներով ջրասույզ է արվել, ծածկվել է հողով ու արմատներով, իսկ հետո դուրս է բերվել այնտեղից այն նույն տեսքով, ինչպիսին եղել էր նախկինում:

Հետագայում այդ վայրն անվանեցին «Պապի աղբյուր», դրա մոտ կառուցվեց մատուռ, որը դարձավ սրբատեղի հազարավոր ուխտավորների համար: Մարդիկ, արդեն, ավելի մեծ հավատով էին լցվել ավետարանի գորավոր ուժի նկատմամբ. շատ հիվանդներ, հայցելով դրա գորությունը, բժշկվում էին, բազմաթիվ անպտուղ կանայք, այդ սուրբ գրքին դիմելուց հետո, մայրանում էին: Անգամ պատմում են, որ համաճարակների ժամանակ ավետարանը հրաշքներ է գործել. երբ ձեռագիրը հայտնվել է վտանգի օջախում, համաճարակն անմիջապես նահանջել է: Ավետարանի հոչակը հասել էր երկրի տարբեր հատվածներ, և շատ ուխտավորներ անմասն չէին մնացել բարեգործությունից: Նրանց թողած գումարով էլ Շուրիշկանում կառուցվեց ծխական դպրոց: Ավետարանի հոչակը, սակայն, միայն հայերի մոտ չէ, որ տարածվել էր. ամենաուշագրավ փաստերից մեկն էլ այն է, որ դրա մասին իմացել էին նաև օտարները, ավելին պարսիկ իշխաններն իրենք էին արգելել ձեռք տալ Շուրիշկանի ավետարանին, դրա գորությունն ընդունելով բացարձակ՝ վեր ամեն կարգի կրոնական ու ազգային տարբերություններից:

Երկար ժամանակ ժողովուրդը կարողացել է առձեռն շփում ունենալ ավետարանի հետ, դիպչել դրան և դիմել խնդրանքով: Եվ միայն 1970-ականներին հրաշագործ գրքի դարավոր դեգերումները վերջ գտան, երբ Հայաստան ներգաղթած Շուրիշկանի բնակիչների կողմից բերված գիրքը հանգրվանեց Հին ձեռագրերի ինստիտուտում:

Երբ կայցելեք Մատենադարան, դուք էլ մոտեցե՛ք այն ցուցափեղկին, որտեղ դրված է «Խնդրակատար» ավետարանը: Ձեր ձեռքը հպե՛ք ապակուն ու մտքում ցանկություն պահե՛ք: Ասում են՝ երազանքն անպայման իրականություն կդառնա:

Սևնա ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

303 ՆՄԱՆԸ ԶԿԱ

մի արեգակ ու մի լուսին: Արեգակը ցերեկն է լուսնյակին փնտրում ու չի գտնում, լուսինը գիշերն է արեգակին փնտրում ու չի գտնում: Երկու թռչուն, երկու ոգի լույս դարձան մեր գլխավերելում: Հավիտյանս հավիտենից նրանք կփնտրեն իրար ու չեն գտնի: Աշխարհի կարգն է: Մենք էլ չենք գտնի: Բայց լույս կատանանք... Նրանց նման իրենց ծննդավայրում չկար, նրանց նմանը Երեւանում էլ չկա, սխալված չեմ լինի, եթե ասեմ՝ հիմա նրանց նմանը աշխարհում չկա...

Լեոն ԶՍԿԱՆՅԱՆ

Մոր մասին

Մոր սիրո մասին շատերն են երգել,
Ասողերի չափ բոլոր մտքեր են հյուսել:
Ես էլ եմ ուզում իմ խոսքը ասել,
Սուրբ մոր սիրուն արժանի, վայել:
Երբեք դուստրի երբ մայր ես դարձա
Երկուսների մեջ շատ բան իմացա,
Եվ մայր դառնալով նոր եմ հասկանում,
Թե ինչ է իրավ մայրը աշխարհում:
Իմ հոգում ունեմ մի իդ՝ մայրական՝
Իմ գավակները ինչ էլ որ դառնան,
Ինչ բարձունքի էլ որ նրանք հասնեն,
Թող որ հայասեր ծնողաց նման
Իրենց լույս կյանքում խոսեն հայերեն:

Նոր կյանքի շեմին

Կանգնած եմ ուրախ նոր կյանքի շեմին
Հայացքս գցած ծով հորիզոնին,
Հույսերով օծված ջահել իմ հոգին,

Ուզում է թռչել ասածո բարձունքին,
Ու տեսնել մարդկանց գերծ բյուր ցավերից,
Սինդ ու դաժան կոտորածներից:
Երանի թե տեսնե իմ խնդագին,
Իրացած լինի նոր կյանքի շեմին:

Իմ Հայաստան


Յոթ տարեկան հասակում
Երբ ժիր էի հավքի պես,
Որպես հրաշք իմ կյանքում,
Երևանում մայրս ինձ
Ողջ քաղաքն է ման ածել,
Ու յոթնակն աղբյուրից
Իմ ծաղակն է հագցել:
Մեր մայր հողի սուրբ գրկում
Ես ինձ լավ եմ զգացել,
Դրա համար իմ կյանքում
Հայաստանն եմ հար սիրել:

Օրսանա ՌԱՅԱՆՅԱՆ

Այն, ինչ եղավ 1959-ի դեկտեմբերի 3-ին, ոչ մի արձանի բացումից հետո չէր պատահել



Այն, ինչ եղավ 1959-ի դեկտեմբերի 3-ին, ոչ մի արձանի բացումից հետո չէր պատահել: Բացման հանդիսավոր, պաշտոնական մասն ավարտվեց, սպիտակ ծածկոցը ցած քաշվեց արձանի վրայից և նրա շուրջը խորնված հոծ բազմությունը, տեսնելով Դավթին թռիչքի պահին, մի պահ հիացած ժպտեց, և հետո պտղակց ծափահարությունը: Ասել, թե դա ծափահարություն էր, քիչ կլինի: Բոլոր ներկաներին համակել էր խանդավառ



մի տրամադրություն: Ծափերին միացան ողևորված բացականչություններ:

Արձանը իբրև արժեք գնահատելու համար ժամանակ չպահանջվեց: Ամենքը հասկացան, որ դա գեղարվեստական հոյակապ կոթող է, որ ինչքան էլ գովես քիչ կլինի:

Ժողովուրդն իրեն տեսավ արձանի մեջ: Նրան մի պահ թվաց, թե դա մի արձանագործի ձեռքի աշխատանք չէ, այլ հավաքական ստեղծագործություն: Եվ չէր սխալվում, եթե ասվածը բառացի չհասկանանք:

Ոգևորության ալիքն անագնացավ, երբ ասպարեզ եկան աշակեցիներն ու սկսեցին

իրենց մարտաշունչ պարը: Ես մի փոքր հեռու էի կանգնած Քոչարից: Հուզված էր, գիտեմ, թե ինչ արժեք է ստեղծել: Գիտեմ, որ ժողովրդի սրտովն է իր տարիների աշխատանքը, բայց, ըստ երևույթին, չէր սպասում այդպիսի խանդավառության: Այն մարդը, որի միտքը միշտ զգաստ էր գործում, հիմա կանգնած էր շփոթ հուզմունքով:

Ժամերն անցնում էին, իսկ ժողովուրդը չէր հանդարտվում: Եվ տեղի ունեցավ անսպասելի: Արձանի չորս կողմը սեղաններ բացվեցին, կարպատներ փռվեցին և դրանց վրա հայտնվեցին գինի ու օղի, հաց ու պանիր, կանաչի ու երշիկ: Ժողովրդական հյուրասիրություն էր: Նախաձեռնողները մոտենում էին հեռու կանգնած մտավորականներին, խնդրում բաժակ բարձրացնել, մի խոսք ասել, միանալ իրենց ուրախությանը: Քոչարն անընդհատ շրջապատման մեջ էր: Փաթաթվում էին, համբուրում, ծունկի գալիս:

«Տեսնո՞ւմ ես ինչ է կատարվում: Միտքը պահիր այս բոլորը, – ասաց ինձ Քոչարը, երբ մոտեցա իրեն: – Սա իմ կյանքի ամենաերջանիկ պահն է: Դու լավ գիտես, թե ինչեր եմ քաշել, և հանկարծ... Չեմ կարծում, թե մի ուրիշ քանդակագործ այս բախտին արժանացած լինի աշխարհում: Գիտես, չէ՞, ինչու եմ ասում: Դավիթն իմն էր մինչև հիմա, էլ իմը չէ, ժողովրդին է: Արվեստի իսկական բախտը սա է»:

<http://www.magaghat.am/>

Ինչու է Հայաստանը ջնջվել Աստվածաշնչից



Մա 1630 թվականի Սուրբ Աստվածաշնչի երկրորդ էջից է, որտեղ նշված է Հայաստանը որպես մարդկության ծագման վայր: Ավելի ուշ, 18-րդ դարից հետո, Հայաստանը ջնջվեց Աստվածաշնչից, երբ 1600 թվականներից մինչև 1749 թվականները Հակոբոս Թագավորի Աստվածաշունչը փոփոխվեց: Ոչ մի հայի երբեք չի հետաքրքրել հարցնել, թե ինչպես է ամբողջ աշխարհը ընդունում Հայաստանը որպես առաջին քրիստոնյա ազգ, սակայն նոր Աստվածաշնչում մեր մասին նշված է միայն մեկ անգամ: Մենք չենք խոսում անգամ Արարատի և Նոյի մասին, որոնք նույնպես շատ քիչ են նշվել Աստվածաշնչում, այլ խոսում ենք Արմենիա բառի մասին, որը գոյություն է ունեցել Աստվածաշունչի միայն մեկ հատվածում: Ստուգեք ցուցանիշը և կտեսնեք, թե ինչ է Աստվածաշունչն ասում



Հայաստանի մասին:

«2 Թագավորներ 19:37 — և դա գալիս է նրանից, որ նա երկրպագում էր Նիզորքին, իր Աստծուն, և որ Աղրամել էր և Մարասարը,

նրա որդիները, զարկեցին սրով, և փախան Հայաստան երկիր, որից հետո Հաորհադուն, որն իր որդին էր թագավորեց իր փոխարեն»:

Սա է արդյոք այն ամենը, ինչի մենք արժանի ենք որպես քրիստոնյաներ: Դա բավական արտառոց և տարօրինակ միջոց է առաջին քրիստոնյա ազգը պատվելու համար: Ճշմարտությունն այն է, որ հասարակությունը այնքան սոցիալապես խեղությունավորված է, որ չի կարողացել հասկանալ և հետևել պատմական կարեւոր իրադարձությունների ճշմարտությանը: Այդ իրադարձությունների կարեւորագույններից մեկը քրիստոնեական բարեփոխումն էր: Խաչակրաց արշավանքներից հետո քրիստոնեական աշխարհը բաժանման ենթարկվեց, և Մագնա Գարտա կարուցելուց հետո Եվրոպայի կեսը ցանկացավ դուրս գալ Հռոմի հին քրիստոնեական կայսրության ղեկավարությունից և նվաճեց այս ամենը, ձեռք բերելով ազատություն և անկախություն:

Բարեփոխված քրիստոնյաները Աստծո փոխարեն հավատում էին միապետության, իսկ ուղղափառ և կաթոլիկ քրիստոնյաները հավատում էին աստվածային իրավունքի իշխանությանը: Միտքը կայանում էր նրանում, որ նրանք ծագել էին հինագույն աստվածներից և երկրի երեսին ապրող

Տիգրան ԽՉՄԱԼՅԱՆ. «Ռուբեն, միգուցե սա կյանքիդ ամենաերջանիկ օրն է»



Մոտ մեկ շաբաթ առաջ հանդիպել էի Հախվերդյան Ռուբենին: Նա մտահոգված էր Գլաձորից ստացած լուրերով՝ գյուղական համայնքի և իշխանությունների բախման մասին հերթական հանք այնտեղ բացելու և մարդկանց հողերը օտարելու հարցով: Մոայլ նստած էինք գրասպասում: Մեկ էլ մոտեցան երկու փոքրիկ հրեշտակ ինչպիսին են լինում հինգ-վեց տարեկան սկսյալ հայ աղջնակները: Նրանցից ավելի խիզախը դիմեց Ռուբենին՝ «Կներեք, Դո ք եք գրել Զատիկի երգը...»: «Այո, նման մեղք էլ եմ գործել», – ժպտած Ռուբեն:

Աղջնակները շուրջով իրար մեջ ինչ-որ բան էին քննարկում: «Եվ ոչ միայն «Զատիկի երգը», այլ նաև «Դո Փոքրիկ Նավակը», «Գտնված երազ» ձեր սիրված մուլտֆիլմի երգերը...», – միջամտեցի ես:

«Իսկ կարելի՞ է, մենք Ձեզ համար Ձեր երգերից երգենք...», – առաջարկեցին փոքրիկները: Այդ ընթացքում մոտեցան մինչև այդ հեռավոր կանգնած մայրերը, որոնք երևի ուղարկել էին աղջիկներին Ռուբենի մոտ, ճանաչելով նրան:

Երկու ձայնով, խոսքերը կույ տալով ու իրար հերթ չտալով սկսեցին երգել: Ռուբենի աչքերը լցվեցին: «Զատիկը», «Փոքրիկ Նավակը», «Աստղագարդ երկինքը»...

Ես մի քանի քայլ հեռու կանգնեցի, որ չխանգարեմ մայրերին հեռախոսներով նկարել այդ անկրկնելի դրվագը՝ Ռուբեն Հախվերդյանը Սիրահարների Այգում լսում է, թե ինչպես են նրա համար նրա երգերը կատարում երկու պատահական հայ երեխա:

Երբ նրանք հեռացան, մենք դեռ որոշ ժամանակ լուռ նստած էինք: «Ռուբ, միգուցե սա կյանքիդ ամենաերջանիկ օրն է», – ի վերջո

ասացի ես:

«Սա պատահականություն չէր կարող լինել: Սա ուղերձ էր քեզ, քո բոլոր հարցերի պատասխանը...»:

Ռուբեն Հախվերդյանը միայնակ կատարել է ազգային սիրանք՝ նա հայերեն երգելու հնարավորություն է ստեղծել մի քանի սերունդների համար: Նա դրանով իսկ փրկել է մի քանի սերունդ: Նա փրկել է հայոց լեզուն այդ սերունդների համար: Ի՞նչ պիտի երգեին այս աղջնակները, եթե չլիներ Ռուբենը: «Չեքուրաշկա» կամ «Չունգա-Չա նգա»: Երևի:

Ամեն ձևեր, հենց տեղում է առաջին ձյունը՝ երթում ու սոցցան-ցերում լավում է Ռուբենի «Ձյունը երկար սպասեց գիշերվա խորհրդին...»-ը:

Ամեն զարուն, հենց սկսվում են անձրևները՝ Հայաստանով մեկ սավառնում է Ռուբենի «Խելագար անձրևը»:

Ամեն աշուն սրճարաններում ու ռադիոներով անխուսափելիորեն հնչում է «Օ քամի, քամի, պոկիր իմ սերն առանց ցավի...»-ն:

Ռուբենի ձայնը և խոսքը շրջապատում և ուղեկցում է մեզ գրեթե քառասուն տարի շարունակ՝ Երևանի գիշերներում և կարմիր կապաշներով ծաղկած դիրքերում, սիրո պահին և տխրության օրերին, պանդխտության ճամփաներում և մոտակա սրճարանում:

«Փոստատար Ռուբեն Հախվերդյան» վավերագրական ֆիլմում, որ ես նկարահանել էի տարիներ առաջ, նա ծիծաղով ասաց՝ «Ես ակամա ահագին նպաստել եմ հայ ժողովրդի բազմանալուն: Ինձ հաճախ խոստովանել են, որ իմ երգերը լսելով սիրով են զբաղվել...»:

Նա նվիրել է մեզ ժամանակակից հայերենով վերստեղծված և գունագարդված աշխարհը, առանց կեղծ պաթոսի և կուրծք ծեծող հորդորների:

Մենք անխնայ և անշնորհակալ օգտվում ենք նրա նվերներից, ոչինչ չտալով փոխարենը: Սիրուց բացի:

Նա, ինչպես միշտ, առանց փողի ու առանց որևէ հատակ ապագայի թափառում է իր հարազատ ու օտար քաղաքում, Երևանի վերջին պոետը: Ես չգիտեմ, ինչ պետք է անել: Փարիզը գլխի վրա էր ման ածում Ժակ Բրեյլին, Մոսկվան ձեռքից ձեռք էր փոխանցում Վիտցեկուն: Այո, տաքսիստները Ռուբենից հաճախ փող չեն վերցնում, սրճարաններում նրա հաշիվը փակելու հերթ է առաջանում, բայց մենք կարծես պետություն ունենք: Մի թե որևէ մշտական թռչակ կամ չգիտեմ ինչ շրայություն կլինի Հայաստանի համար, որպես մեր բոլորի պարտքն ու տուրքը մեր միակ ու անկրկնելի Ռուբեն Հախվերդյանին...

Նա ինձ չի լիազորել սա գրելու ես միգուցե նեղանա ինձնից սրա համար: Կներեք, Ռուբեն...

Տիգրան ԽՉՄԱԼՅԱՆ

320

ոչ մի միապետ չէր կարող փոխարինել Աստծուն: Այս վեճը դարեր շարունակ հանգեցրեց արյունալի պատերազմների եւ որից հետո բարեփոխված քրիստոնյաները անջատվեցին Եվրոպայից եւ նախակեցին դեպի Ամերիկա, նոր աշխարհ, ստեղծելով իրենց սեփական կայսրությունները, ովքեր այսօր իշխում են մեզ: Անկախություն եւ ազատություն ստանալուց եւ քրիստոնեական կայսրությունից հեռանալուց հետո նրանք իրավունք վերապահեցին փոխել Աստվածաշունչը սեփական տարբերակով եւ սեփական մարգարեներով, ինչպես նաեւ ջնջել Հայաստանը Աստվածաշնչից:

Նրանք իշխում էին այն հողը, որը նվաճել էին, որպեսզի նաեւ կարողանան վերահսկել իրենց հայրենակիցներին եւ քաղաքացիների համագումունքների համակարգերը:

Աշխարհն այսօր օգտագործում է այն Աստվածաշունչը, որը բողոքական եւ նոր

բարեփոխված քրիստոնեական տարբերակն է: Դա է հիմնական պատճառը, որ հին Աստվածաշունչում Հայաստանը ներկայացված էր որպես աշխարհի մարդկության հիմնասկզբ: Ինչպես երեւում է տոհմաձառում, եբրայեցիները գտնվում էին ծագումնաբանական ծառի ամենավերջում: 9-րդ դարի վերջերում անգլո-սաքսոնական մատենագրերը իրենց առաջին էջերում նշում էին, որ առաջին անգլիացիները Հայաստանից էին: Հայրուրավոր տարիներ առաջ Գերմանիայի վարդապետ Աննո երկրորդը գրել էր, որ առաջին բավարիացիներն ու գերմանացիները հայեր են եղել: Ռոբերտ Էլիսը գրել էր, որ առաջին իտալացիները նույնպես հայեր են եղել, Էլիզաբեթ Բեդեթթըր գրել էր, որ առաջին իռլանդացիներն էլ են հայ եղել:

Շատ հին քարտեզներ, պատմաբաններ, հնագետներ եւ այժմ նաեւ գիտնականներ բացահայտում եւ գրում են այն մասին, որ Հայաստանը, լինելով մարդկային քաղաքա-

կրթության ծագման հիմնախրոնիկ, ինչպես նաեւ առաջին աղբյուրը, որ միշտ պատվով էր ներկայացրել մեզ, ոչ մի անգամ չի նշվել նոր սուրբ Աստվածաշունչում:

Հետեւաբար մեր շատ սիրելի քույրեր եւ եղբայրներ կարելու է հանգիստ լինել եւ հասկանալ, թե ովքեր ենք մենք եւ ուր ենք գնում, եւ ամեն կերպ օգնենք մեր երիտասարդներին գերծ մալ մոլորությունից եւ փորձել հետ բերել այն մարդկանց, ովքեր օրեցօր հեռվանում են ուղղափառ քրիստոնեությունից, քանի որ դա է միակ ճանապարհը ըմբռնելու, թե որքան է մեր կրոնը սխալ կերպ հաղորդակցվել եւ ոչնչացվել համաշխարհային պատմությունից: Մենք երբեք չենք հավատա, ինչպես նաեւ մեր սրտերում երբեք չենք ընդունի այն գրքերի գրված մտքերին կամ մարդկանց, ովքեր մինչեւ օրս ծխախոտ են Հայոց ցեղասպանությունը եւ հայ ժողովրդի պատմությունն ու կրոնը:

ԱՇԽԱՐՀԻ ՎԵՐՁՈՐ (Գեշ երազ)

Էսգիշեր Աստված Գաբրիել իրեշտակապետի ու մի խումբ քաղաքական գործիչների հետ երազ եկավ:

Ուրախության չափ չկար:

– Աստված ջան, – ասի, – ուրե՛մն էս ամեն ինչը ճիշտ է ո՞ւր... Ուրե՛մն, վերջապես, աշխարհի վերջն է...

– Հատ է ս ուզում, որ լինի, – տարօրինակ ժպտաց Տերը:

– Դե...նոց ասեմ..., – կմկմացի, – մի կողմից՝ ափսոս է, դեռ մի քանի հազար ծառ մնացել է, չհասցրեցինք կտրել, Խոստովի արգելափակումը դեռ բանջար-մանջար է բուսնում, չհասցրեցինք ամայացնել, մի երկու բակ ու փողոց դեռ սեփականաշնորհված չեն... Մարդ ենք էլի, էն էլ՝ հայ, գործներս կիսատ չմնար... Բայց, մյուս կողմից էլ, ավար... փրկություն է...սա ինչ կյանք է, որ ափսոսանք... Էսքան պարտքերի ու տոկոսի տակից ո՞նց ենք դուրս գալու...

– Էդ երկրային մտածողությունդ թող, – խոժոռվեց Տերը, – հաստատ որոշված է՝ աշխարհի վերջ չի լինելու...

– Ո՞նց թե չի լինելու... Էսքան սպասել ենք էս օրվան ու չի լինելու... Բա որ չի լինելու, էս մեր քաղաքական գործիչների հետ ինչու էս ժամանակ...

– Հատուկ եկել ենք, որ ազդարարենք նոր աշխարհի սկիզբը:

– Ո՞նց... դեռ սկզբում ե՞նք...

– Բա ի՞նչ էք, այ տղա, չես տեսնո՞ւմ, որ ընտրությունների ենք պատրաստվում:

– Այ ցավդ տանեմ, – աղաչեցի, – բեր սրանց խելքին մի ընկնի, կործանի պրծենք... դժոխքում մի անկյուն տուր, կու՛չ գանք, տանջվենք...

– Հալա սրա խելքին տես, – Գաբրիելին դիմեց Տերը, – Դժոխք... է՛ն փ՛ պոզեր... Առաջին հայր չես, որ կաշին փրկելու համար աղաչում է, թե՛ հոգիս առ, թեկուզ դժոխք ընկնեմ...

– Տառապանքս փորձ ունի, – հոգոցով հաստատեց Գաբրիելը:

– Այ մարդ... ներողություն... այ պարոն հրեշտակ ջան, ուրե՛մն քո փորձը բերել համեմատում էս մեր կյանքի հետ... Էդպես եք վարվում, էլի, որ Տիրոջը սխալ ինֆորմացիա եք տալի, նա էլ, հրեա, խոսքից ետ է կանգնում...

– Դու էդ բանը չափտի ասեիր, – նեղացավ Տերը, – թե Էդպես շարունակես վա՛յ յ քո մեղքը, կպատժեմ ու հուր-հավիտյան հոգիդ չեմ առնի... Բա էս խոսքից ետ կանգնող Աստված ե՛մ... Ժամանակը կգա, կկործանվեք: Խոստանում եմ՝ Հայաստանից կսկսեմ: Բայց դեռ դրա ժամանակը չի: Առջում ընտրություններ են: Էս ընտրություններն էլ անցնեն, կերևա՛, թե ինչ ենք անում... Պայմանավորվեցի՞նք: Քեզ հետ եմ պայմանավորվեցի՞նք...

– Դե, որ ասում ես...

– Ապրես, – խրախուսեց ինձ Տերն ու շրջվեց դեպի Գաբրիելը, – Գաբո, սրան մի 10 000 դրամ տուր...

Սամվել ԽԱՆԱԹՅԱՆ

Տիե բաներ...

Լոռեցի Աշոտը ընկերների հետ պատրաստվում է խոպան գնալ: Ավտոկայան հասնելու համար զգ ծրագրով տաքսի է պատվիրում:

– Ուրե՛մն մատու դնիլ տեմ սրա վրա, հետո՛ սրա... Հի՛րն էդ գանգեց: Այո՛, տաքսու շոֆերն ա՛... Բարըլիս, ախպեր ջան... դու հըմի որդի՛ ես... Հա, ուրե՛մն ուղիղ արի, առաջին խաչմերուկից աջ կթեքվես... Այտա, դե հասցեն եմ ասում էլի՛... Արտանց Վալոդին ճընանչում է՛ս, ուստա Վալոդին... Խի, դու որդիանցի՛ ես... Հա՛... դե լավ, որ ասում ես, ուրե՛մն կարևոր չի: Կհարցնես Վալոդի տունը որն ա, շանց կտան... Վալոդի տան կողքի փողոցով աջ կթեքվես... Ա, հո յոթնուկ չես, հասցեն եմ ասում էլի՛... Ուրե՛մն Վալոդի տան կողքի փողոցով աջ կթեքվես, առաջին տունը՝ Վարսկանցն ա, անց կկենաս, երկրորդ տունը՝ Մեհրաբանցն ա, անց կկենաս, երրորդը՝ Շատկորանց տունն ա, դա էլ անց կկենաս, չորրորդի հայաթում կանգնած ենք: Միջոցների բոյովը ես եմ... Ուր տենք գնալ... Արթուրն ասում ա Օմսկ գնանք, ընդի ամֆալտի գործը լավ ա, բայց Միշոն էլ կպել ա, թե՛ Պաղմասկովյա գնանք... Հա ջա՛ն... արևը ապրիլ..., – անջատում է հեռախոսը: – Այտա, էս ինչ ֆայնով օբլի էր էս շոֆերը, կես խոսքից հասկացավ...
– Հըմի գալիս ա՛:
– Չէ, ասավ գանիտ եմ...

Լոռեցին կնոջը տանում է Երևան, բժշկական ստուգման: Ետ են գալիս, պայմանով, որ երկու օրից կգանգահարի բժշկին՝ կիմա-

նա անալիզների պատասխանը:

Երկու օրից գանգում է: Բժիշկը ասում է.
– Գիտեք, վատ բան է եղել, երկու կանանց անալիզների համարները սխալմամբ նույնն է գրվել ու հիմա չենք կարող կոնկրետ ասել, թե ո՞րն է ձեր կնոջին... Այդ կանացից մեկը տառապում է սկլերոզով, մյուսը՝ սպիդով:
– Այտա, բա ո՞նց անենք, – շվարում է լոռեցին:

– Դե, որպեսզի էլի Երևան չհասնեք, ձեր կնոջը տարեք անտառ ու բաց թողեք, եթե երեկոյան տուն վերադարձավ, ուրե՛մն սկլերոզ չունի...

Երկու լոռեցի:

– Այտա, – ասում է մեկը, – քու հըմար ամենադժար գործը ո՞րն ա:
– Աղամանի մեջ աղ լցնելը:
– Խի, էդ ի՞նչ մի դժվար բան ա, որ...
– Դե հալա էդ փոքր ծակերովը աղը ներս լցրու, տենամ կարա՞ս ու...

– Այտա, Մաքո, հորդ մահապատիժ էին տվել, ինչ եղավ:

– Սրապ ջան, հաշիվը տվինք՝ ծանր վիրավորեցին...

Գաիչնիկը կանգնեցնում է սպիտակցու ավտոն ու նկատելով, որ մոտեցած վարորդի շավարի ցեփը կոճկած չի, զգուշացնում է.

– Շավարիդ ցեփն ի՞նչ ա:
– Ա, տրա հըմար էլ ե՛ք կանգնացնում, – զարմանում է սպիտակցին:

Սամվել ԽԱՆԱԹՅԱՆ

«Горцарар»

Издается с июля 1999г.

Автор проекта и учредитель –
Ваграм БЕКЧЯН

Главный редактор - Ваграм БЕКЧЯН
Գլխավոր խմբագիր՝ Վահրամ ԲԵԿՉՅԱՆ

Зам. гл. редактора - Роза ГУЛЯН
Գլխ. խմբագրի տեղակալ՝ Ռոզա ԴՈՒԼՅԱՆ

ИЗДАТЕЛЬ

Издательский Дом

«ШАГАНЭ»

Лицензия серия ИД № 02313

Журнал зарегистрирован
в Министерстве Российской Федерации
по делам печати, телерадиовещания
и средств массовых коммуникаций
Регистрационный номер
ПИ № 77-5015

Авторские материалы

не рецензируются и не возвращаются.
Переписку с читателями редакция
не ведет. Мнение авторов может
не совпадать с мнением редакции.

Материалы со знаком **Գ** публикуются
на правах рекламы.

Редакция не несет ответственности
за содержание рекламных объявлений.

ПЕРИОДИЧНОСТЬ ВЫХОДА - ЕЖЕМЕСЯЧНО

Отпечатано

ОАО «Калужская типография стандартов» г. Калуга, ул. Московская 256.
Формат А3, объём 4,0 п.л.
Тираж 1 500 экз. Зак. № 477.

Территория распространения:
Российская Федерация, страны СНГ,
зарубежные страны.

В номере использованы материалы

«НОВЕ КОБЧЕ», «АЗГ», «АРАВОТ»,
«ГА», «ЕТЕР», «ԲԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»,
«ԻՐԱՎԱՆԿ», «ՎՕՅՆԻ», «НОВОЕ ВРЕМЯ».

Цена свободная.

Адрес издательства и редакции:

248001, г. Калуга,
ул. Суворова, 160.

Тел.: (4842) 56-59-29.

E-Mail: gortsarar@list.ru
факс (4842) 565-929,

www.gortsarar.ru



E-Mail: gortsarar@list.ru